Թուրքիայում կալանավորված ամերիկացի հովիվ Էնդրյու Բրանսոնի դեպքը տիպիկ է՝ Անկարան նրան մեղադրեց «ահաբեկչության» եւ «լրտեսության» մեջ, ԱՄՆ վարչակազմը կիրառեց շատ կոշտ տնտեսական պատժամիջոցներ, որոնք լուրջ ճնշում էին իշխանության վրա: Արդյունքում Թուրքիան ընդամենը մի քանի ամսում փոխեց իր դիրքորոշումը:

Կարդացեք՝ էջ 4

Հնայած 1933-45 թթ. նացիստական Գերմանիան եւ 2018-25 թթ. ՔՊ-ական Հայաստանը պատկանում են տարբեր դարաշրջանների ու մշակույթների, սակայն ՀԼՄ-ների ճնշման գործիքները զարհուրելիորեն նույնն են՝ վարկաբեկում, հալածանք, տուգանք, գործունեության խափանում, խմբագիրների ու լրագրողների հետապնդում: Մնացածն առջեւում է:

Կարդացեք՝ էջ 6

Դատական Նիստի էի մասնակցում, որի ժամանակ մի բավականին տարօրինակ հարց էր քննարկվում՝ դավաճանո՞ւմ է, արդյոք, Փաշինյանը կնոջը: Ասեմ՝ շատ հետաքրքիր դատ էր: Դե, հո ամեն օր այսպիսի «տժժիկ» թեմաներով դատ չի՞ լինում: Լիքը լրագրող կար եւ մի բեղավոր տղամարդ՝ որպես հետաքրքրասեր հասարակության ներկայացուցիչ:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 188 (4090), 22 նոյեմբեր, շաբաթ, 2025

www.hraparak.am

Հանրային կապերի եւ տեղեկատվության ՊՈԱԿ-ի Օրբելի վերլուծական կենտրոնի կազմակերպած «Օրբելի ֆորում 2025»-ին, որը կայացավ նոյեմբերի 4-6-ը, պարզվում է, ոչ միայն թուրք, այլեւ ադրբեջանցի լրագրողներ են ներկա եղել: Հրավերն ուղարկել է ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի կենտրոնը: Մենք տեղեկացանք, որ լրագրողներն Ադրբեջանի պետական Azertac լրատվամիջոցից են եղել: Հայաստանում նրանց կեցության ծախսերը հոգացել է հրավիրող կողմը՝ ՀՀ կառավարությունը: Հյուրանոցում նրանց անվտանգությունը խստորեն պահպանվել է: Նախ՝ մինչեւ նրանց ժամանելը նախապես ամբողջ տարածքը սանրել են, եւ այստեղ գտնվելու 3 օրվա ընթացքում սենյակի դռան մոտ մշտապես անվտանգության աշխատակիցներ են կանգնած եղել: Մեզ հետ զրույցում «Օրբելի ֆորումի» ժամանակ ադրբեջանցի լրագրողների հետ կապի պատասխանատու Դավիթ Սարգսյանը հաստատեց տեղեկությունը՝ նշելով, որ լրագրողների խումբը 2 անձից էր կազմված. «Նրանք Հայաստանում մնացել են 3 օր՝ Երեւանի «Մարիոթ» հյուրանոցում: Ծախսերի մասով որեւէ տեղեկություն չունեմ, այդ մասով ես չեմ զբաղվել»: Ասաց, որ ժամանել էր 4 ադրբեջանցի՝ 2 լրագրող եւ 2 բանախոս: Նշենք, որ «Մարիոթ»-ում ստանդարտ համարներում մեկ անձի կեցության 1 օրվա արժեքը տատանվում է 100-150 հազար դրամի սահմաններում:



Գրել էինք, որ Նիկոլ Փաշինյանը Մարզահամերգային համալիրում մեծ հավաք է կազմակերպում, սակայն մասնակիցներին դեռ չեն ասել, թե ինչ օրակարգով, միայն գերատեսչությունների աշխատակազմերին ասվել է, որ քաղծառայողները, մեկ մարդու պես, շաբաթ առավոտյան ներկայանան Համալիր՝ բացակայությունները չեն ներվելու: Երեկ ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանն էլ այդ մասին հարցին պատասխանել էր. «Ենթադրում եմ՝ վաղը պարզ կլինի: Ես ներկա եմ լինելու: Կա առիթ, վաղը կիմանաք»: Երեկ մենք ձեռք բերեցինք միջոցառման օրակարգը: Այն սկսվելու է կեսօրին, մասնակիցներին կանչել են ժամուկես շուտ, որ գրանցվեն: Սկզբում ներս կբերվի ՀՀ եռագույնը, կինչի օրհներգը, ապա ելույթ կունենա Փաշինյանը՝ «Պետության հարատեւության բանաձեւը» թեմայով: Ապա կլինի հարցուպատասխան՝ QR համակարգի միջոցով, այսինքն՝ գրավոր: Դրան կհաջորդի երաժշտական ընդմիջում: 2-րդ մասում՝ «Պետական կառավարման համակարգի արդյունավետությունը՝ որպես տնտեսական զարգացման կարեւոր գործոն» վերտառությամբ, ելույթ կունենան նախարարներ Գեւորգ Պապոյանը, Սրբուհի Գալյանը, Ժաննա Անդրեասյանը եւ փոխվարչապետները:

Անիմաստ ջանքեր

Իշխանությունն անհանգիստ է, տենդագին փնտրտուքների մեջ է, առանց շունչ առնելու՝ աշխատում է, որ իր վարկանիշը բարձրացնի, մրցակիցներին ոչնչացնի եւ համոզի հանրությանը, որ ինքն արժանի է շարունակելու երկրի կառավարումը: «Կրթվելը նորաձեւ է» շարժում, «Իրական Հայաստանի» գաղափարախոսություն, «4-րդ հանրապետության» հիմնադրում, «խաղաղության դարաշրջանի» ու «խաղաղության խաչմերուկի» հայեցակարգ, սահմանների բացում, «Թրամփի ուղու» կառուցում: Այս եւ բազում այլ արհեստածին, թղթի վրա մնացող, ոչ մի կերպ իրականություն չդարձող եւ շարունակություն չունեցող ձեռնարկները խոսում են միմիայն իշխանությունը պահելու անհագ ցանկության մասին: Եթե նման ջանք ու եռանդ ներդրվեին մեր պետության առաջ ծառացած խնդիրների լուծմանը, հանրային համերաշխություն հաստատելուն եւ ողջ ազգի պոտենցիալի մոբիլիզացմանը, հաստատ՝ մենք մեծ հաջողությունների հասած կլինեինք, եւ հոգեբանորեն էլ մեր ազգն այսքան կոտրված ու խեղճ վիճակում չէր լինի: Բայց արդյո՞ք այս բոլոր ջանքերն ու նախաձեռնությունները ծառայում են իրենց առաջ նման նպատակ դրած իշխանությունների ծրագրերին կամ գոնե նրանց մոտեցնում են այդ նպատակին: Իմ կարծիքով, այս իշխանությունն արդեն ունի շատ կայուն համակիրների բանակ, տարբեր հաշվարկներով՝ 15-20 տոկոս, եթե դրան գումարենք նաեւ տեռորով, վարչական ռեսուրսով «քամվող» քվեները՝ եւս մի 10-15 տոկոս: Բայց ակնհայտ է, որ դրանից ավելին նրանք այլեւս չեն ունենալու, որովհետեւ կայուն հակառեյտինգ ունեն: Մեր կորուստները չներող մի հսկա հատված կա հանրության մեջ, որի համար եթե երկնքից աստղեր էլ սրանք իջեցնեն, այլեւս նրանց համակրանքը շահել չեն կարողանա: Ինչպես կան մարդիկ, որոնք սրանց ձայն են տալու, անգամ եթե Հայաստանը դադարի գոյություն ունենալ:

ՔՊ-ն նոյեմբերի 28-ին ԱԺ արտահերթ նիստ է հրավիրել. «ՀՀ եւ ԵՄ միջեւ՝ ԵՄ ճգնաժամային կառավարման գործողություններում ՀՀ մասնակցության շրջանակը սահմանելու մասին» համաձայնագիրը վավերացնելու հարցով, թեեւ դեկտեմբերի 2-ից մեկնարկում է հերթական քառօրյան: Ո՞րն է հրատապության պատճառը, իշխող թիմում չգիտեն, կարծում են, որ արտահերթ ընթացակարգով փորձում են համաձայնագրին հատուկ կարեւորություն հաղորդել: Օրեր առաջ էլ ԵՄ դեսպանները մի շարք բարձրաստիճանների հանդիպեցին, այդ թվում՝ Փաշինյանին: Մեզ ասացին, որ ընտրություններից առաջ ուզում են, որ ՀՀ-ն ԵՄ անդամագրման հայտին ընթացք տա: Իսկ քննարկվելիք համաձայնագիրը «հնարավորություն է ընձեռում՝ ճգնաժամերի կառավարման ոլորտում լավագույնս օգտագործել ԵՄ փորձն ու գիտելիքները»:

ՇՐՋԻԿ ՀԱՎԱՏԱՅՅԱԼՆԵՐԸ ԴԱՎԱԼՈՒ ԵՆ ԳՆՈՒՄ

Շրջիկ հավատաքննիչների խմբակը՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, այս կիրակի էլ այցելելու է Արարատի մարզի Արարատ գյուղի Սուրբ Հակոբ եկեղեցի: Պատարագն իրականացնելու է Տեր Երվանդ քահանա Բաբայանը: Շուրջ մեկ ամիս է՝ Փաշինյանը տարբեր եկեղեցիներում պատարագների է մասնակցում, սկզբում կարգալույծ քահանա Ստեփան Ասատրյանի ձեռամբ, հետո՝ ոչ կարգալույծ քահանաների՝ փորձելով Մայր Աթոռին այլընտրանք հոգեւոր խմբակ ձեւավորել: Եվ ամեն անգամ նախապես պայման է դրվում, որ պատարագի տեքստից պետք է զեղչվի կաթողիկոսի անունը, ինչը պարտադիր է Եկեղեցու կանոնագրքով: Այս կիրակի էլ այցելելու են Վազգեն Սարգսյանի հայրենի Դավալու: Մեր տեղեկություններով, Տեր Երվանդ Բաբայանը Սուրբ Հակոբ եկեղեցու մշտական քահանան չէ, հիմնական քահանան Տեր Հարությունն է, որը Փաշինյանի հայտարարության օրը՝ որ գնալու է Արարատ, արձակուրդ է գնացել: Տեր Երվանդն Արարատ գյուղ է ուղարկվել Մասյացոտնի թեմից, նա Արտաշատի Սուրբ Հովհաննես եկեղեցու հոգեւոր հովիվն է: Եկեղեցին, ի դեպ, կառուցվել է Հովիկ Աբրահամյանի կողմից, դրանից էլ անունը՝ Սուրբ Հովհաննես: Ի դեպ, լուրեր կան, որ Մասյացոտնի թեմի առաջնորդ Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը եւ Վայոց Ձորի թեմի առաջնորդը դեմ են քվեարկել Փաշինյանին միացած Տեր Արամին՝ Ստեփան Ասատրյանին կարգալույծ անելու միջնորդությանը՝ հիմնավորմամբ, թե չարենք պետություն-եկեղեցի հարաբերությունները: Ենթադրվում է, որ կաթողիկոսի անունը չեղարկելու պահանջին առաջիկա պատարագն անող քահանան համաձայնել է, ինչպես արվեց նախորդ անգամ՝ Վայոց Ձորում:

ՉԻ ԿԱՐԵԼԻ ՁԵՎԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՒՐԻՇԻ ՁԵՌՔԻՆ ԽԱՂԱԼԻՔ ԴԱՌՆԱԼ

ԲԱՔՈՒ

Երեկ, առավոտյան ժամը 10:00-ին հայկական քաղհասարակության 5 ներկայացուցիչ չարտերային թռիչքով մեկնեցին Բաքու: Պատվիրակության մեջ են Արեգ Քոչինյանը, Բորիս Նավասարդյանը, Նարեկ Մինասյանը, Նաիրա Սուլթանյանը, Սամվել Մելիքսեթյանը: Արեգ Քոչինյանն «Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն» ՀԿ նախագահն է, 2018-2020թթ. աշխատել է ՀՀ Անվտանգության խորհրդում՝ որպես մամուլի քարտուղար: 2022-2024թթ. եղել է «Իքս-արտ» համակարգիչների խանութի փոխտնօրենը: Ընկերության անվան հետ է կապված 2024-ին ձեռք բերված գերհամակարգչի պատմությունը, որի գնման համար կառավարությունը ծախսել էր 2.7 մլրդ դրամ: Քոչինյանը 2022-ին հիմնադրել է նշված հետազոտական կենտրոնը: Նարեկ Մինասյանը Քոչինյանի հիմնադրած «Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն» ՀԿ ասոցացված փորձագետ է, զուգահեռ աշխատում է Հանրային հեռուստաընկերությունում՝ որպես քաղաքական լրագրող: 2014-2018թթ. եղել է «Հայացք» վերլուծական կենտրոնի ռազմաքաղաքական անվտանգության փորձագետը:

Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոնից պատվիրակության մեջ ընդգրկված մյուս անդամը փորձագետ, քաղաքագետ Սամվել Մելիքսեթյանն է: Նա 2009-ին ավարտել է Դոնի Ռոստովի Հարավային Դաշնային համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետը: Բորիս Նավասարդյանը, որը, իր պնդմամբ՝ կառավարության առաջարկով է ընդգրկվել խմբում, Երեւանի մամուլի ակումբի նախագահն է՝ 1995 թվականից, 2023-ից ակումբի պատվավոր նախագահն է: Խմբում է նաեւ Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տնօրեն Նաիրա Սուլթանյանը: Հիշեցնենք, որ մեկ ամիս առաջ՝ հոկտեմբերի 21-22-ին, Երեւան էին ժամանել ադրբեջանցի պատվիրակներ, այդ թվում՝ Լաչինը փակող էկոակտիվիստ կոչվածը: Սա, ըստ էության, պատասխան այց է: Կառավարությունն այս այցի համար հատկացրել է 17.5 միլիոն դրամ: Ադրբեջանական լրատվամիջոցները գրել են, որ հայաստանյան քաղհասարակության ներկայացուցիչները չեն տեսակցելու հայ ռազմագերիներին, եւ նրանց վերադարձի մասին քննարկում չի լինելու: Մենք տեղեկացանք, որ նրանք Բաքու են մեկնել Խաչատուր Սուքիասյանին պատկանող FlyOne ավիաընկերության օդանավով:

Իրավապաշտպան **Նինա Կարապետյանցը**, մեզ հետ զրույցում անդրադառնալով այս այցին, նկատում է. «Այս ամենը սպասելի էր: Սա Երեւան կատարած այցի պատասխանն էր: Չեմ զարմանում՝ տեսնելով այն մարդկանց անունները, ովքեր մեկնել են Բաքու: Բնականաբար, պետք է Բաքու մեկնեին նրանք, ովքեր իշխանության հետ բացարձակ, 100 տոկոսով համախոհներ են: Բաքու չէր կարող մեկնել մեկը, որի խոսույթն իշխանության հետ համաձայնեցված չլիներ: Բնականաբար, դժվար է ակնկալել, որ այս մարդկանցից գոնե մեկը կխոսի հայ ռազմագերիների մասին: Խիստ կասկածում եմ, որ ես՝ որպես իրավապաշտպան երբեւիցե կհրավիրվեմ նման միջոցառումների, որովհետեւ իմ դիրքորոշումը շատ հստակ է: Խաղաղության գնացող երկրները չեն կարող ունենալ այնպիսի խոսույթ, որը մենք լսում ենք Բաքվից՝ պետական մակարդակով: Չի կարող լինել հաշտության մասին պրոցես, եթե հայ մարդկանց ապօրինաբար շարունակում են դատել, եթե Հայաստանի տարածքները համարում են պատմական ադրբեջանական: Ու էլի կան բազմաթիվ խնդիրներ, որոնք ունեն հստակեցման կարիք: Ինչու, որովհետեւ խաղաղության գնացող կողմը չի կարող դա անել միակողմանի՝ իր հաշվին: Չի կարող այնպես լինել, որ զիջողը լինի միայն Հայաստանը, զիջումների պետք է գնան բոլոր կողմերը, ինչը մենք չենք տեսնում, ցավոք: Թեպետ ես վստահ եմ, որ գերիների մի մասն ընտրություններին ընդառաջ վերադառնալու է Հայաստան, եւ դա լինելու է Ալիեւի նվերը Նիկոլ Փաշինյանին՝ իր դիրքերն ամրապնդելու համար: Իհարկե, ուրախալի է, որ անգամ մեկ գերի վերադառնա, սակայն պետք է հասկանանք, թե որն է լինելու այդ ամենի գինը»:

Երբ Ադրբեջանի քաղհասարակության ներկայացուցիչները ժամանեցին Հայաստան, դրա նպատակը պարզ էր՝ աշխարհի աչքին թոզ փչել, իսկ ոմն է Հայաստանի նպատակը: «Հայկական կողմն էլ է ցանկանում միջազգային հանրության մոտ տպավորություն ստեղծել, որ Ադրբեջանը քաղաքակիրթ երկիր է եւ փորձում է խաղաղության գնալ: Այս ամենն արվում է այդ պրոցեսի բեմադրման համար: Ես չեմ ասում, որ Հայաստանն ու Ադրբեջանը չպետք է երկխոսության մեջ մտնեն, ոչ, սակայն ամեն ինչ պետք է լինի առողջ տրամաբանության մեջ: Չի կարող Հայաստան գալ մեկը, որը մասնակցել է ցեղասպանական բնույթի գործողությունների՝ բնապահպանի անվան տակ, հայտնի տիկնոջ մասին է խոսքը, որը սովի է մատնել 120 հազար մարդու: Նման մեկին Հայաստան ուղարկելը պարզապես մեսիջ էր, չեմ ուզում կոպիտ բառ ասել, իսկ Հայաստանի կողմից նրան ընդունելը թուլամորթության նշան էր: Հայաստանը պետք է ասեր, որ այդ տիկինը մեզ համար անցանկալի է՝ պարզ պատճառով: Չի կարելի ձեւական պրոցեսներ ապահովելու համար ուրիշի ձեռքին խաղալիք դառնալ»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Բնական գազը գյուղում է, բայց տներում գազ չունեն

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ, հեռավոր Բարեկամավան գյուղի բնակիչները բողոքում են, որ տարիներ առաջ գյուղ բնական գազ է մտել, սակայն Բարեկամավանի առանձնատներում բնական գազ չկա, որովհետեւ հարեւան Կոթի գյուղում գազատարի փականը փակել են: Ապրիլի 11-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում էի ուղարկել, թե ինչու Բարեկամավան, Իջեւան համայնքի սահմանամերձ Կիրանց, Աճարկուտ, Բերքաբեր գյուղերի բնակիչները բնական գազից չեն օգտվում: Մարզպետարանից պատասխանել են. «2024 թվականին սուբվենցիոն ծրագրով Բերքաբեր, Կիրանց եւ Աճարկուտ բնակավայրերը գազիֆիկացվել են, իրականացվում են չափագրման աշխատանքներ եւ իրավական կարգավիճակ (սեփականության վկայականներ) տրամադրելուց հետո կիրականացվեն ներտնային գազիֆիկացման աշխատանքներ, իսկ Բարեկամավան բնակավայրում իրականացվել են ներտնային ցանցի 6 կառուցման աշխատանքներ՝ 68 տնտեսություն ապահովված է բնական գազով»:

Մինչ օրս Բարեկամավանում ոչ ոք ապահովված չէ բնական գազով: Մարզպետին իմ արած հարցումից անցել է 7 ամիս, սակայն Բերքաբեր, Կիրանց, Աճարկուտ գյուղերը գազիֆիկացված չեն: Բարեկամավան գյուղից ճշտեցի, որ 2015 թվականին գյուղ բնական գազ է մտել, իսկ 2024 թվականին «Վարդանյան» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ Բարեկամավանի առանձնատներից ավելի քան 60-ը գազիֆիկացվել է, հիմնադրամը տրամադրել է գազատարից դեպի այդ տներ գազի ճյուղավորումներ անցկացնելու համար պահանջվող գումարը, սակայն 60-ից ավելի տները բնական գազից ցայսօր չեն կարողանում օգտվել, գազամատակարարում չի իրականացվում:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ ԿԱՊ ՈՒՆԻ ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԱՄՈՒՍԻՆԸ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Մարտի 21-ի գիշերը Արտիմետ խճուղի 1 հասցեում գտնվող գազալցակայանում սպանվեց 36-ամյա Արթուր Պարոնյանը: Նրան սպանել էր Արմավիրի մարզում հայտնի՝ «Ճապ» մականունով 33-ամյա Կարեն Բադամյանը: Ճապը շատ մտերիմ է Էջմիածնի նախկին ղեկավար Դիանա Գասպարյանի ամուսնու՝ այդ ժամանակ ավագանու ԶՊ-ական անդամ Արամայիս Միրզոյանի հետ, եւ այդ ժամանակ չէր բացառվել, որ վեճի եւ սպանության հիմքում էլ նախկին քաղաքապետի ամուսնու հետ կապված «թեմա» կա. գազալցակայանը, որտեղ կատարվել էր սպանությունը, հենց Միրզոյանին է պատկանում:

Ներքին գործերի նախարարությունից հայտնել էին, որ, նախնական տվյալներով, մարտի 22-ին, ժամը 01:30-ի սահմաններում Արմավիրի մարզի Արտիմետ բնակավայրի սկզբնամասում գտնվող գազալցակայանի տարածքում մի խումբ անձանց միջեւ վիճաբանություն է եղել, արդյունքում տղամարդը կրակոց է արձակել 36-ամյա Արթուր Պարոնյանի ուղղությամբ: Բժշկական կենտրոնում գիտակցության չգալով՝ Պարոնյանը մահացել է: Քննչական կոմիտեից էլ հայտնել էին, որ գազալցակայանում տեղի ունեցած սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում 1 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով եւ 155-րդ հոդվածի 1-ին մասով: Հանրային քրեական հետապնդումը հարուցվել էր Կարեն Բադամյանի նկատմամբ, որը տեւական ժամանակ հետախուզման մեջ է եղել:

Եվ ահա, օրեր առաջ հայտնի դարձավ, որ այս սպանության գործով նախաքննությունն ավարտվել է, Ճապը կալանավորվել է: Նրա պաշտպան **Ռոբերտ Խաչատրյանը** «Հրապարակ»-ին ասաց, որ իր պաշտպանյալն ինքնակամ ներկայացել է նախաքննական մարմին եւ հայտնել, որ մեղադրանքը չի ընդունում. «Մեղադրանքը չի ընդունում, փաստական հանգամանքները չենք ընդունում, թե կոնկրետ որը, դա չեմ կարող ասել արդեն, բայց կան փաստական հանգամանքներ, որ չենք ընդունել, ցուցմունքներ ենք տվել: Դեպքը, որը տեղի է ունեցել, ընդունում ենք, բայց ոչ մեղադրանքով նշված հանգամանքներով, այսքանից ավել չեմ կարող ասել»:

Արամայիս Միրզոյանի անունը կամ այս գործում, պաշտպանն ասաց՝ ոչ. «Արամայիս Միրզոյանի անունը ոնց կարող է լինել: Իրենք իրար ընկեր են, դա՝ հաստատ, բայց Արամայիս Միրզոյանն այդ օրը Հայաստանում չի էլ եղել»:

- Ինչո՞ւ է սպանել այդ մարդուն:

- Ո՞վ է ասել, որ սպանել է, մենք մեղադրանքն այդ մասով չենք ընդունում, դրանից ավել բան չեմ կարող ասել Ձեզ:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ «ԹԻԹԵՌ ՆԿԱՐԵԼՈՒ» ՄՐՑԱՎԱՁՔԻ ՄԵՋ Է

ԱՐԵՎՄՈՒՏՔ

Բոլոր համապետական ընտրություններին ընդառաջ, Հայաստանում մշտապես մոլեգնել է պոպուլիզմը, հատկապես օրվա իշխանությունները պոպուլիստական նախաձեռնությունների, ձեռնարկների մարաթոն են հայտարարել: Նիկոլ Փաշինյանի իշխանությունն էլ բացառություն չէ, եթե չասենք, որ «Փաշինյանի իշխանություն» եւ «պոպուլիզմ» բառերը վաղուց հոմանիշ են դարձել: Բայց որ մեր օրերում «ազգափրկիչ» ընդդիմությունը նույնպես կտրվեր թրենդին եւ իշխանությունից հետ չէր մնա, դժվար էր պատկերացնել: Փաստն այն է, որ վերջին շրջանում գոնե խորհրդարանական ընդդիմության նախաձեռնությունները պարապ վախտի խաղալիք են հիշեցնում, ամբոխահաճո են, բայց՝ անիրատեսական: Շաբաթներ առաջ Սերժ Սարգսյանի ղեկավարած «Պատիվ ունեմ» դաշինքն էր, որ Նիկոլ Փաշինյանին անվստահություն հայտնելու նախագիծ էր բերել խորհրդարան, այն դեպքում, որ ՔՊ-ից աջակիցներ չունեն, իմպիչմենտի համար բավարար թվով ձայներ, արդյունքում հենց «օրորոցում» ՔՊ-ն «խեղդեց» այդ գործիքին չպետք է մոտենալ: Եվ երկրորդ. Սերժ Սարգսյանի թիմում անընդհատ փորձում են ձերբազատվել մեղադրանքներից, որ երրորդ նախագահն է բերել Նիկոլին, եւ հնարավոր ու անհնար ճանապարհներն օգտագործում են՝ հակառակում համոզելու համար: Սեփական քմահաճություններին տուրք տալով՝ ընդդիմադիրները հերթական անգամ կանգնեցին կոտրած տաշտակի առջեւ, ձախողվեց անվստահության նախաձեռնությունը՝ ավելի խորացնելով հասարակության մեջ առկա հիասթափությունն ու ապատիան:

Երեկ էլ հերթը Քոչարյանի թիմակիցներինն էր, ի դեպ, եթե «Հայաստան» դաշինքի պատգամավորները գործընկերային պահվածք էին դրսեւորել, եւ մի քանի պատգամավոր մշտական հանձնաժողովում մասնակցում էր ՊՈՒ-ի հեղինակած նախագծի քննարկմանը, երեկ «Հայաստան»-ցիները մեն-մենակ էին մնացել ՔՊ-ականների հետ՝ Հայաստանում քաղբանտարկյալների առկայության մասին հայտարարության նախագծի քննարկման ժամանակ: Նախագծի հիմնական զեկուցողը դաշինքի պատգամավոր Էլինար Վարդանյանն էր, որ տեղեկացրեց՝ նոյեմբերի 26-ին էլ լսումներ են հրավիրել նույն թեմայով, նաեւ նամակ-հրավեր փոխանցվեց Գլխավոր դատախազություն՝ լսումներին մասնակցելու համար: Էլինար Վարդանյանը հայտարարեց, որ Հայաստանում մարդիկ քրեական հետապնդման են ենթարկվում ԵԽԽՎ 1900 բանաձեւի սահմանած չափանիշներով. ունենք կալանավորված արքեպիսկոպոս Միքայել Աջապահյան, որին ոչ միայն քաղբանտարկյալ, այլեւ խղճի բանտարկյալ կարելի է անվանել, Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյան եւ նույն գործով անցնող մյուս 17 անձինք. դատական նիստերը խիստ կասկածի տակ են դնում գործի անաչառությունը: Ընդդիմադիր պատգամավորը բազմաթիվ հայտնի ճշմարտությունների մասին խոսեց, այդ թվում հայտարարեց՝ ԱԺ ամբիոնը պետական անձանց կողմից սուտ եւ կեղծ տեղեկության տարածման համար է ծառայել. Աննա Վարդապետյանը եւ ՔԿ ղեկավարն են դա արել՝ տարբեր գործերով. «ՔԿ ղեկավարը հայտարարեց, որ առկա է ձեռքով գրված ահաբեկչության պլան, մինչդեռ գործի նյութերում նման բան չկա»:

Սակայն անգամ Արծվիկ Մինասյանը Վլադիմիր Վարդանյանի ճոռոմ ելույթից հետո ստիպված եղավ խոստովանել, որ չեն ակնկալում, թե իշխանությունը կընդունի, որ Հայաստանում քաղբանտարկյալներ կան: «Կարո՞ղ եք մատնանշել որեւէ երկիր, որի իշխանությունն ընդունել է, որ իր երկրում կան քաղբանտարկյալներ»,- իր հռետորական հարցին Մինասյանն ինքն էլ բացասական պատասխան տվեց ու ասաց, թե իրենք էլ միամիտ չեն, որ կարծեն, թե Փաշինյանի իշխանությունում վաքական Արեւմուտքն անմիջապես արձագանքում էին նման ցանկացած դեպքի եւ ճնշում գործադրում ՀՀ իշխանությունների վրա, բայց հիմա նույն ընդդիմադիրները պատեհ-անպատեհ առիթներով հայտարարում են, որ Արեւմուտքը, հետեւաբար՝ ՀՀ-ում հավատարմագրված ԵՄ դեսպանները, լիակատար աջակցում են Փաշինյանի իշխանությանը եւ իրենց լռությամբ կանաչ լույս վառում ՀՀ-ում մոլեգնող «բեսպրեդեայն: Փոխարենը Սերժ Սարգսյանի թիմակիցները մի քանի խրոխտ ելույթով փորձեցին ամրագրել իրենց տեղն արմատական ընդդիմադիր դաշտում, համոզել, որ հենց իրենք են Փաշինյանի ամենաթունդ ընդդիմադիրները:

Բացի այդ՝ Սերժ Սարգսյանի թիմակիցները բարդույթներ ունեն եւ ուզում էին «կոնկուրենտ ֆիրմային»՝ Ռոբերտ Քոչարյանի թիմին ապացուցեին իրենց «ճիշտը»: Քոչարյանականներն այլ դիրքորոշում ունեն իմպիչմենտի հարցում. քանի դեռ չունեն իմպիչմենտի համար պահանջվող ձայները, կարծում են, որ իշխանության դեմ պայքարի այդ գործիքին չպետք է մոտենալ: Եվ երկրորդ. Սերժ Սարգսյանի թիմում անընդհատ փորձում են ձերբազատվել մեղադրանքներից, որ երրորդ նախագահն է բերել Նիկոլին, եւ հնարավոր ու անհնար ճանապարհներն օգտագործում են՝ հակառակում համոզելու համար: Սեփական քմահաճություններին տուրք տալով՝ ընդդիմադիրները հերթական անգամ կանգնեցին կոտրած տաշտակի առջեւ, ձախողվեց անվստահության նախաձեռնությունը՝ ավելի խորացնելով հասարակության մեջ առկա հիասթափությունն ու ապատիան:

Երեկ էլ հերթը Քոչարյանի թիմակիցներինն էր, ի դեպ, եթե «Հայաստան» դաշինքի պատգամավորները գործընկերային պահվածք էին դրսեւորել, եւ մի քանի պատգամավոր մշտական հանձնաժողովում մասնակցում էր ՊՈՒ-ի հեղինակած նախագծի քննարկմանը, երեկ «Հայաստան»-ցիները մեն-մենակ էին մնացել ՔՊ-ականների հետ՝ Հայաստանում քաղբանտարկյալների առկայության մասին հայտարարության նախագծի քննարկման ժամանակ: Նախագծի հիմնական զեկուցողը դաշինքի պատգամավոր Էլինար Վարդանյանն էր, որ տեղեկացրեց՝ նոյեմբերի 26-ին էլ լսումներ են հրավիրել նույն թեմայով, նաեւ նամակ-հրավեր փոխանցվեց Գլխավոր դատախազություն՝ լսումներին մասնակցելու համար: Էլինար Վարդանյանը հայտարարեց, որ Հայաստանում մարդիկ քրեական հետապնդման են ենթարկվում ԵԽԽՎ 1900 բանաձեւի սահմանած չափանիշներով. ունենք կալանավորված արքեպիսկոպոս Միքայել Աջապահյան, որին ոչ միայն քաղբանտարկյալ, այլեւ խղճի բանտարկյալ կարելի է անվանել, Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյան եւ նույն գործով անցնող մյուս 17 անձինք. դատական նիստերը խիստ կասկածի տակ են դնում գործի անաչառությունը: Ընդդիմադիր պատգամավորը բազմաթիվ հայտնի ճշմարտությունների մասին խոսեց, այդ թվում հայտարարեց՝ ԱԺ ամբիոնը պետական անձանց կողմից սուտ եւ կեղծ տեղեկության տարածման համար է ծառայել. Աննա Վարդապետյանը եւ ՔԿ ղեկավարն են դա արել՝ տարբեր գործերով. «ՔԿ ղեկավարը հայտարարեց, որ առկա է ձեռքով գրված ահաբեկչության պլան, մինչդեռ գործի նյութերում նման բան չկա»:

Սակայն անգամ Արծվիկ Մինասյանը Վլադիմիր Վարդանյանի ճոռոմ ելույթից հետո ստիպված եղավ խոստովանել, որ չեն ակնկալում, թե իշխանությունը կընդունի, որ Հայաստանում քաղբանտարկյալներ կան: «Կարո՞ղ եք մատնանշել որեւէ երկիր, որի իշխանությունն ընդունել է, որ իր երկրում կան քաղբանտարկյալներ»,- իր հռետորական հարցին Մինասյանն ինքն էլ բացասական պատասխան տվեց ու ասաց, թե իրենք էլ միամիտ չեն, որ կարծեն, թե Փաշինյանի իշխանությունում նման խոստովանություն կարող են անել, պարզապես բերել են հայտարարության այս տեքստը, լսումներ կան, որ հանրության ավելի լայն շերտեր իմանան այդ մասին, կիրավիրեն Հայաստանում հավատարմագրված դեսպանների ուշադրությունը եւ այլն: Իհարկե, ոչ մեկը չի ասում, թե լսումների կամ քաղբանտարկյալների համար ակցիաների օրակարգն անարդյունավետ է, անիմաստ, 2000-ականներին բազմաթիվ նման ակցիաներ են անցկացվել նույն՝ Նիկոլ Փաշինյանի համար, բայց տարբեր էր իրավիճակը. այն ժամանակ Հայաստանում հավատարմագրված դեսպաններն ու հանձնակատարները

ԳԵՐԻՆԵՐ

ՊԵՏՔ Է ԿԻՐԱՌԵԼ ԷՆԴՐՅՈՒ ԲՐԱՆՍՈՆԻ ՆԱԽԱԴԵՊԸ, ԵՐԲ ԹՈՒՐՔԻԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՄՍՈՒՄ ԱՋԱՏ ԱՐՁԱԿԵՑ ԱՄՆ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ

Ադրբեջանի գլխավոր դատախազը Բաքվում պահվող հայ պատանդների համար դատարանից պահանջեց 16 տարուց մինչեւ ցմահ ազատազրկում: «Հրապարակն» այս թեմայով զրուցել է Հայ-գերմանական իրավաբանների միության վարչության անդամ, փաստաբան **Խաչատուր Միքիթարյանի** հետ:

- Ադրբեջանի դատախազության կողմից արդյոք սպասելի՞ էին նման պատիժների առաջարկները:

- Այո, սպասելի էին, քանի որ, ինչպես հստակ արձանագրված է Եվրոպական խորհրդարանի 2025թ. մարտի 13-ի բանաձեւում, տեղի ունեցածը քաղաքական դրդապատճառներով պայմանավորված ցուցադրական դատավարություններ էին (sham trials), որոնք չեն համապատասխանում արդար դատաքննության որեւէ միջազգային չափանիշի: Բանաձեւը նշում է, որ Ադրբեջանի իրականացրած դատավարությունները քաղաքականացված են, չեն ապահովում պաշտպանական իրավունքներ եւ առնչվում են մի երկրի, որը փորձում է քրեական հետապնդումն օգտագործել որպես ճնշման եւ վրեժխնդրության միջոց: Այս պայմաններում ակնհայտ էր, որ դատավճիռները լինելու էին խիստ եւ նախապես կանխորոշված:

- Իսկ մեղադրանքներն ինչ-որ բանով հիմնավորո՞ւմ են:

- Ըստ միջազգային աղբյուրների՝ Ադրբեջանում պահվում են 23 հայ ռազմագերիներ եւ քաղաքական դեմքեր, որոնց թվում՝ Արցախի նախկին նախագահներ, նախարարներ, խորհրդարանականներ եւ զինվորական առաջնորդներ: Նրանց առաջադրված մեղադրանքների ծավալն աննախադեպ է: Արցախի նախկին ռազմաքաղաքական ղեկավարության դեմ հարուցված գլխավոր գործով ձեւակերպվել է 2 548 մեղադրանք, իսկ առանձին գործերով, օրինակ՝ Ռուբեն Վարդանյանի նկատմամբ՝ 42 մեղադրանք: Մեղադրանքների փաթեթը ներառում է գրեթե բոլոր ծանրագույն հոդվածները՝ պատերազմական հանցագործություններ, մարդկության դեմ հանցագործություններ, խաղաղության դեմ հանցագործություններ, ցեղասպանություն, ահաբեկչություն եւ ահաբեկչության ֆինանսավորում, ապօրինի զինված խմբավորումներ ստեղծելը, խոշտանգումներ, ստրկություն, բռնի անհետացում, պետական իշխանության բռնի զավթում եւ պահպանում, պատերազմի օրենքների եւ սովորույթների խախտում, ինչպես նաեւ՝ բռնի տեղահանում եւ դեպորտացիա: Այս ամենը՝ մեղադրանքների ծայրաստիճան մեծ քանակը, քաղաքական կոնտեքստը եւ դատավարության ընթացքը, լիովին հաստատում է Եվրոպական խորհրդարանի գնահատականը, որ դա օրինական դատական գործընթաց չէր, այլ քաղաքական հաշվեհարդար՝ կանխորոշված արդյունքով:

- Եթե դատավճիռներ արձակվեն, դա վերջնակա՞ն կլինի, թե՞ կան միջազգային իրավական հարթակներ կամ կազմակերպություններ, որոնց միջոցով հնարավոր է ազդել Ադրբեջանի վրա:

- Ադրբեջանի վրա ազդելու համար գոյություն ունեն ինչպես իրավական, այնպես էլ քաղաքական գործիքներ: Իրավական հարթությունում Հայաստանը, անհատական դիմողները եւ հասարակական կազմակերպությունները կարող են դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան, ՄԱԿ-ի մի շարք իրավապաշտպան մեխանիզմներ, ինչպես նաեւ՝ Միջազգային դատարան: Բացի այդ, Միջազգային քրեական դատարանը կարող է հարուցել վարույթներ՝ ծանր միջազգային հանցագործությունների հիմքով: Սակայն այս բոլոր մեխանիզմներն ունեն մեկ հիմնարար սահմանափակում. չունենալով պարտադրողական ուժ՝ նրանք կարող են միայն փաստագրել, դատապարտել եւ ձեւավորել քաղաքական ու բարոյական ճնշում, բայց չեն կարող անմիջականորեն պարտադրել Ադրբեջանին՝ կատարել իր միջազգային պարտավորությունները: Իրականությունն էլ հենց սա է ցույց տալիս. Ադրբեջանի կողմից արդեն իսկ առկա ԱՄԴ (ICJ) որոշումների հետեւողական անտեսումն ապացուցում է, որ նույնիսկ իրավականորեն պարտադիր միջազգային վճիռները մնում են գործնականում ազդեցություն չունեցող, երբ բացակայում են դրանք կիրառելու քաղաքական կամքն ու դրսից եկող ուժեղ մեխանիզմը: Ադրբեջանն իր այս վարքագիծն արդարացնում է հղումով սեփական ազգային օրենսդրությանը, պետական ինքնիշխանությանը եւ «ներքին գործերին չմիջամտելու» սկզբունքին՝ միաժամանակ զավեշտականորեն պնդելով, թե գործում է միջազգային պարտավորությունների շրջանակում, այն դեպքում, երբ հենց այդ պարտավորություններն է համակարգված կերպով խախտում: Այս պայմաններում ակնհայտ է, որ միայն իրավական միջոցներով Ադրբեջանին ստիպել փոխել իր վարքագիծը՝ պարզապես անհնար է: Հետեւաբար, հարցի լուծումը պետք է տեղափոխել քաղաքական հարթություն:

- Որո՞նք են այն երկրները, որոնք կարող են ազդել Ադրբեջանի վրա:

- Միջազգային քաղաքական դերակատարները, հատկապես՝ ԱՄՆ-ն, ունեն իրական ազդեցության լծակներ՝ տնտեսական, դիվանագիտական եւ անվտանգային գործիքների տեսքով: ԱՄՆ կառավարությունը, ինչպես ցույց է տվել անցյալում, անհրաժեշտության դեպքում կարող է զգալի ճնշում գործադրել մարդու իրավունքները խախտող կամ փակ կառավարման համակարգ ունեցող պետությունների վրա, ստիպելով նրանց՝ ազատել քաղաքական կալանավորներին: Սակայն նման քայլերն արդյունավետ են միայն այն դեպքում, երբ առկա է քաղաքական կամք, որը ձեւավորվում է այն ժամանակ, երբ տվյալ հարցը համընկնում է ԱՄՆ-ի ռազմավարական շահերի հետ եւ գերակայում է ԱՄՆ-Ադրբեջան հարաբերություններին, էներգետիկ համագործակցությանը, տարածաշրջանային անվտանգությանը եւ Իրանի ուղղությամբ վարվող քաղաքականությանը: Վառ օրինակ է 2018 թվականին Թուրքիայում կալանավորված ամերիկացի հովիվ Էնդրյու Բրանսոնի դեպքը: Երբ Անկարան նրան մեղադրեց «ահաբեկչության» եւ «լրտեսության» մեջ, ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմը կիրառեց շատ կոշտ տնտեսական պատժամիջոցներ, որոնք լուրջ վնաս հասցրին թուրքական տնտեսությանը եւ ստեղծեցին զգալի ճնշում իշխանությունների վրա: Արդյունքում Թուրքիան ընդամենը մի քանի ամսում փոխեց իր դիրքորոշումը եւ ազատ արձակեց Բրանսոնին: Այս նախադեպը հստակ ցույց է տալիս, որ մարդու իրավունքներն արհամարհող եւ բիրտ ուժի վրա հիմնված իշխանական համակարգ ունեցող պետությունները, ինչպես Ադրբեջանը, հաճախ արագ զիջում են, երբ բախվում են իրենցից առավել հզոր ուժի արտաքին քաղաքական եւ տնտեսական ճնշմանը:

- Այս դատավարություններով ի՞նչ նպատակ է հետապնդում Ադրբեջանը:

- Ադրբեջանի հիմնական նպատակն է՝ պատմական, իրավական եւ բարոյական հիմքից զրկել Արցախյան շարժումը եւ անվավեր հայտարարել Արցախի հայության ինքնապաշտպանության իրավական, պատմական ու մարդասիրական հիմնավորումները: Դատավարությունները կառուցված են այնպես, որ հայերի ինքնապաշտպանական պայքարը ներկայացվի որպես հանցավոր գործողություն, իսկ Արցախի քաղաքական ու պետական ինստիտուտները՝ որպես ապօրինի կազմավորում: Միաժամանակ Բաքուն ձգտում է ապահովել հետադարձ օրինականացում սեփական գործողությունների համար՝ 2020 թ. պատերազմի, 2022 թ. շրջափակման եւ 2023 թ. էթնիկական զտման: Այս գործընթացներով Ադրբեջանը փորձում է ձեւավորել «իրավական» այնպիսի մեկնաբանություն, որի հիման վրա Հայաստանը ներկայացվի որպես ագրեսոր, եւ հետագայում հնարավորություն ստանա հիմնազուրկ փոխհատուցման պահանջներ առաջադրել, ինչպես նաեւ արդարացնել նոր տարածքային հավակնությունները եւ հնարավոր հետագա ագրեսիան: Այսպիսով, Ադրբեջանի համար դատավարությունները ոչ թե արդարադատության միջոց են, այլ՝ քաղաքական գործիք, որի նպատակը պատմական իրականության վերագրումն ու սեփական ագրեսիվ-էքսպանսիոն քաղաքականության լեգիտիմացումն է:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔՈՒՄ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ Է ՍՏԱՆԱԼՈՒ՝ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱՆՔԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ

Գեղակերտի դպրոցի տնօրեն Անուշ Համբարձումյանը, որը Վաղարշապատի ավագանու ընտրության քարոզչության ժամանակ օգնություն էր բաժանել՝ խախտելով բարեգործության արգելքը, առանձնապես ծանր չի տանում խափանման միջոց տնային կալանքը: Ընտրությունից հետո Արմավիրի մարզպետարանը նրան մեծարանքին հավասարազոր վերաբերմունքի է արժանացրել. տիկնոջը քաջալերում են՝ ինչ արել է, լավ է արել: Ընտրություններում ՔՊ-ի թեկնածու Արգիշտի Մեխակյանի քարոզչությանը մասնակցելու համար արձակուրդ մեկնած եւ ընտրությունից հետո արձակուրդից վերադարձած մարզպետը, պարզվում է, տնօրենին ոչ միայն թթու խոսք չի ասել՝ օրենքը խախտելու եւ ընտրակաշառք բաժանելու համար, այլեւ կարգադրել է 1/3-ի չափով պահպանել նրա աշխատավարձը:

Եթե հասարակության ու հատկապես ուսուցիչների կարծիքից չվախենար, մարզպետ Խաչատրյանը գուցե Անուշ Համբարձումյանին խրախուսական պարգեւներ էլ տար՝ Խոյի բնակիչներին նյութապես շահագրգռելու եւ իրենց թեկնածուի օգտին ձայներ կորզելու համար: Իսկ գեղակերտցիները միանշանակ չեն վերաբերվում Անուշի տնային կալանքին եւ նրան չպատժելու փաստին: Կան մարդիկ, որոնք պնդում են, որ Անուշը միշտ է բարեգործություն արել. արտասահմանից ուղարկել են, ինքն էլ բաժանել է: Ասում են՝ եթե իմանար, որ քարոզչության ընթացքում բարեգործությունն արգելված է, չէր անի: Ոմանք մեղադրում էին, բայց չէին դատապարտում: «Դե, դժբախտ կին է՝ ամուսնուց ու երեխաներից լքված: Սփոփանքը գտել է ՔՊ-ի գրկում, ուզում է ամեն ինչ անի՝ Նիկոլի աչքի լույսը դառնալու համար: Լսել ենք՝ բարձր պաշտոն է ուզում, դրա համար էլ կաշվից դուրս է գալիս, որ հավատարմությունն ապացուցի: Կին է, չարժե շատ խիստ վերաբերվել, էդ օրերի աղմուկն ու խայտառակությունն արդեն բոլ են իրեն»,- մեզ ասաց նարդի խաղացող տղամարդկանցից մեկը:

«Եթե ընդդիմությունից լիներ, հիմա բանտում կլիներ, չէին նայի՝ կին է, դժբախտ է... Տեսեք՝ քանի ազնիվ ու հայրենասեր մարդ է բանտարկված, մի անմեղ նախադասության, մի անատամ խոսքի համար ինչ կարգին մարդիկ են նստած: Բա ո՞ւր մնաց օրենքի հավասարությունը: Թե՝ ինչ կարելի է ՔՊ-ին, չի կարելի մյուսներին: Եթե այդքան արդարադատ են, թող էս կնոջն էլ երկու ամսով կալանավորեն, որ ընտրությունների նախօրյակին մարդկանց նյութականով գայթակղել ու մոլորեցրել է: Հերիք չի՝ տուն են ուղարկել, դեռ աշխատավարձն էլ չեն կտրել: Չեմ զարմանա, եթե տնային կալանքից հետո բարձր աշխատավարձով նոր պաշտոն էլ տան»,- խոսակցությանը միջամտեց մեկ ուրիշ տղամարդ:

Արեգ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՊՈՒՏԻՆՅԱՆ

ԱՀԱ ԹԵ ԻՆՉՊԻՍԻՆ Է ԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏՈՒԼՅԱՑԻԱՆ, ԵՎ ԻՆՉԻ Է ԳՆՈՒՄ ՓԱՇԻՆՅԱՆԸ

2022 թ. ռուս-ուկրաինական պատերազմից անմիջապես հետո փակված՝ ռուսական ամենամեծ լսարանն ունեցող «Էխո Մոսկվի» ռադիոկայանի խմբագիր Ալեքսեյ Վենեդիկտովն ասում է. սպասեք մեկ տարի եւ կտեսնեք, թե ՌԴ նախագահ Պուտինն ինչքան «կոկիկ» կլինի Փաշինյանի նկատմամբ: Իսկ ինչ է փոխվելու այդ մեկ տարվա ընթացքում, ինչն է խանգարում Պուտինին՝ հիմա «կոկիկ» լինել Փաշինյանի նկատմամբ, «կոկիկ»-ն այս դեպքում փոխաբերական, այսինքն, ճիշտ հակառակ՝ սարկազմի իմաստով է ասված: Բոլորը սպասում են ռուս-ուկրաինական պատերազմի ավարտին, որն արդեն տեսանելի է: Երեկ հրապարակվեց ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի պատրաստած 28 կետանոց խաղաղության նախագիծը, որը գրվել է առանց Ուկրաինայի մասնակցության, բայց պարտադրելու են, որ Ուկրաինան ստորագրի: Ահա թե ինչպես են աշխարհի մեծ տերություններն իրականում վերաբերվում երկրների ինքնիշխանությանը: Ինչ իմաստ ունի հարցնել Ուկրաինայի կարծիքը, երբ երկիրը բաժանում են երկու մասի՝ 75 տոկոսը՝ ԱՄՆ-ին, մնացած 25-ը՝ Ռուսաստանին: Միթե մորթողները մորթվողի կարծիքը երբեւէ հարցրել են, միթե Ուկրաինան առաջին երկիրն է, որ այդպես սառնասրտորեն իրար մեջ կիսում են աշխարհի մեծերը: Քանի՞ անգամ են Հայաստանն այդպես կիսել Պարսկաստանն ու Հռոմը, Բյուզանդիան եւ Արաբական խալիֆը, Օսմանյան կայսրությունը, Խորհրդային Ռուսաստանն ու Թուրքիան: Քանի՞ անգամ են իրար մեջ կիսել Լեհաստանը: Խորհրդային Միությունն ու ԱՄՆ-ն իրար միջեւ կիսեցին Գերմանիան, Վիետնամը, Կորեան... ցանկը չափազանց մեծ է:

Ուկրաինան, ավելի ճիշտ՝ նախագահ Վլադիմիր Զելենսկին, փետրվարի 28-ին ԱՄՆ նախագահ Թրամփի հետ առաջին հանդիպումից հետո դիմադրում էր, դեմ էր նման պայմաններով խաղաղությանը՝ դա համարելով խայտառակություն անձամբ իր եւ Ուկրաինայի համար, բայց հիմա ստիպված կլինի համաձայնել, քանի որ ամերիկացիները նրան ուղղակի պատին են դեմ տվել՝ ապացուցում են, որ պատերազմը նրա ու նրա մերձավոր շրջապատի համար պայքար է ոչ թե հանուն հայրենիքի, այլ հանուն հարյուր միլիոնավոր դոլարներ յուրացնելու: Ուկրաինայում բացահայտվել է կոռուպցիոն հանցագործությունների բազմամիլիոնանոց շղթա, որին զոհ են գնացել Զելենսկու կառավարության մի քանի անդամ, բազմաթիվ այլ պաշտոնյաներ, հիմա հերթը հասել է նրա աշխատակազմի ղեկավար Անդրեյ Երմակին, հաջորդը կարող է լինել հենց նախագահը: Ամերիկացիները հասկացնում են, որ միայն իրենց միջնորդությամբ ստորագրվելիք պայմանագիրը կարող է Զելենսկուն ազատել քրեական հետապնդումից եւ կալանքից. պայմանագիրը համաներում է խոստանում պատերազմի բոլոր մասնակիցների համար, իսկ Զելենսկին եւ նրա մերձավոր շրջապատը պատերազմի ամենակարեւոր մասնակիցներն են:

Զելենսկու ճակատագիրը հուզում է թերեւս միայն նրան ու մերձավորներին, մեզ համար ավելի կարեւոր է տեսնել, թե պարտվող կողմի համար ինչպիսին է լինում իրական կապիտուլյացիան: ԱՄՆ-ն խոստանում է Ղրիմը, Դոնեցկի եւ Լուգանսկի մարզերը ճանաչել դե ֆակտո ռուսական, ինչը նշանակում է, որ Ուկրաինան պարտավոր կլինի հանձնել այդ մարզերի՝ ուկրաինական հսկողության տակ մնացած մասերը, երեւի դրանք կփոխանակվեն Խարկովի եւ Դնեպրի մարզերում ռուսների հսկողության տակ գտնվող տարածքների հետ, Խերսոնի եւ Զապորոժիեի մարզերում ռուսների հսկողության տակ անցած տարածքները եւս կմնան նրանց հսկողության տակ, բայց առանց միջազգային ճանաչման: Ուկրաինայի Սահմանադրությունը կփոխվի, եւ այնտեղից կհանվի ՆԱՏՕ-ին միանալու դրույթը, ուկրաինական բանակի թիվը կսահմանափակվի գրեթե երկուսուկես անգամ, Ուկրաինան կզրկվի հեռահար հրթիռներ ունենալու հնարավորությունից, որոնք հասանելիություն կունենան Մոսկվային եւ Սանկտ Պետերբուրգին: Ուկրաինայի վերականգնման համար Ռուսաստանը կվճարի 100 միլիարդ դոլար՝ իր սառեցված արտասահմանյան հաշիվներից, այդ հաշիվներում մնացած 200 միլիարդը կօգտագործվի ռուս-ամերիկյան համատեղ նախագծերի իրականացման վրա՝ շահողը դարձյալ Միացյալ Նահանգներն է: ԱՄՆ-ն խոստանում է վերացնել Ռուսաստանի նկատմամբ եղած պատժամիջոցները եւ Ռուսաստանին վերադարձնել Մեծ ութնյակ. սա արեւմտյան երկրների դաշինքն է՝ ուղղված Չինաստանի դեմ: Փաստացի, Միացյալ Նահանգները փորձում է Ռուսաստանին դարձնել Չինաստանի դեմ պայքարում իր դաշնակիցը եւ ոչ թե հակառակը:

Կարո՞ղ է Ուկրաինան, ԵՄ երկրների հետ համատեղ, դիմադրել ԱՄՆ-ի կողմից ներկայացված այս նախագծին, կփորձեն, բայց դժվար թե հաջողեն: Նախ՝ որ նրանք, մեծ հաշվով, ամերիկյան վասալներ են, որոնք փորձում են ինչ-որ ինքնուրույնություն խաղալ, բնավորություն ցույց տալ, եւ եթե Զելենսկին փորձի դիմադրել, ապա խաղաղության հաջորդ պլանը ամերիկացիները կառաջարկեն արդեն Ուկրաինայի նոր իշխանության ղեկավարին, իսկ Զելենսկին կզրկվի համաներման խոստումից:

Տեսնում եք, թե ինչպիսին է իրական կապիտուլյացիան, ի տարբերություն 2020 թվականի նոյեմբերի 9-ին ստորագրված եռակողմ հայտարարության, որտեղ որեւէ խոսք չկար Հայաստանի Սահմանադրության փոփոխության, Հայաստանի զինված ուժերի թվի կրճատման, երկրի որեւէ ռազմական դաշինքի մասնակցության անթույլատրելիության մասին, ոչ մի տարածքային զիջում Հայաստանի միջազգայնորեն ճանաչված սահմաններից: Հիմա հասկանում եք, թե ինչ են ուզում Ադրբեջանը եւ Թուրքիան Հայաստանից՝ նոյեմբերի 9-ի համաձայնագրի վերախմբագրում, կատարյալ եւ անվերապահ կապիտուլյացիա. Սահմանադրության փոփոխություն, զինված ուժերի եւ դրանց սպառազինության սահմանափակում, ՀԱՊԿ-ին մասնակցության արգելք, տարածքային զիջումներ Ադրբեջանին: Հայաստանի իշխանությունը՝ Փաշինյանը, համաձայնել է այդ պահանջների հետ, դրանց մի մասը, ըստ էության, արել է, մյուսներն անելու համար ժամանակ է ուզել՝ խորհրդարանական ընտրություններից հետո, երբ իր իշխանությանը ոչինչ չի սպառնա: Բայց ժամանակը եւ իրադարձությունները աշխատում են ընդդեմ Փաշինյանի, եւ նա չի հասցնի կատարել իր խոստումները: Զելենսկին էլ էր ժամանակ ձգում եւ գրեթե մեկուկես տարի երկարաձգեց իր ողորմելի իշխանությունը՝ ի հաշիվ Ուկրաինայի եւ տասնյակ հազարավոր մարդկային կյանքերի:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՄԱՏ՝ ԶԵԼԵՆՍԿՈՒՆ, ՇԱԽ՝ ՆԻԿՈԼԻՆ

Ողջ աշխարհը քննարկում է ռուս-ուկրաինական խաղաղության պայմանագրի ամերիկյան նոր տարբերակը: Ամերիկացիները, բնականաբար, ասում են՝ լավն է, եվրոպացիները քրթմնջում են, թե իրենք այնքան էլ մասնակից չեն այդ ամենին, ուկրաինացիները, դատելով Զելենսկու վերջին հայտարարություններից, կարծում են, որ դա կապիտուլյացիա է ամերիկյան ձեւով՝ ստանում ես «ապագա» եւ անվտանգություն, ռուսները հայտարարում են, թե դա զուտ ամերիկյան տեսլական է, եւ Ալյասկայում ռուս-ամերիկյան բարձր մակարդակի հանդիպումից հետո որեւէ նոր բան չի եղել: Ակտիվացել է նաեւ Թուրքիան, որին, չգիտես՝ ձեռնտո՞ւ է Թրամփի նոր պլանը, թե՞ ոչ: Էրդողանը Զելենսկուն խորհուրդ է տվել «բարձր» պահել Թուրքիայի հովանու ներքո ռուս-ուկրաինական երկկողմ բանակցությունների «պլանկան», քանի որ ամերիկյան պլանը նախատեսում է ռուսական գազի՝ ուկրաինական տարանցիկ ուղիների վերագործարկում, իսկ դա կարող է նշանակել Եվրոպայի անկախացում ինչպես ռուս-թուրքական, այնպես էլ ադրբեջանա-թուրքական գազատարներից: Կարճ ասած՝ ԱՄՆ-ն իր նոր պլանով ոտքի է հանել բոլորին, որ այս կամ այն կերպ առնչակից են ռուս-ուկրաինական պատերազմին:

Ամերիկյան լրատվամիջոցներն ԱՄՆ նախագահի նոր պլանի մասին սկսեցին խոսել ամերիկա-չինական հանդիպումից հետո, ինչը խոսում է այն մասին, որ չինական կողմն էլ որոշակի դերակատարում ունի այս հարցում: Արժե հիշել, որ ժամանակին գոյություն ուներ նաեւ ռուս-ուկրաինական հակամարտության կարգավորման չինական պլան, որին դեմ չէր Ռուսաստանը: Կարելի է ասել, ուրեմն, որ ԱՄՆ նոր պլանը Վաշինգտոն-Մոսկվա-Պեկին քննարկումների արդյունք է, իսկ մյուսների գործն է՝ առաջիկայում ընդունել այն: Փոփոխություններ կլինե՞ն, թե՞ ոչ, կախված է «մեծ եռանկյունու» հայեցողությունից:

Ծանոթանալով ռուս-ուկրաինական խաղաղության «ապագա պայմանագրի» կետերին՝ կարելի է պնդել, որ դրանք արտացոլում են գետնի վրա ստեղծված փաստացի իրավիճակը եւ անվտանգության երաշխիքներ տալիս ինչպես Կիեւին, այնպես էլ Մոսկվային, ինչպես ուկրաինացիներին, այնպես էլ ուկրաինացի ռուսներին: Ըստ այդ պլանի՝ Ռուսաստանը կանգնում է իր «նվաճած» բնագծերում, Դոնբասը եւ Լուգանսկը ճանաչվում են ռուսական (Ուկրաինան կարող է չճանաչել), շփման գծով ստեղծվում է բուֆերային գոտի՝ ռուսական վերահսկողության տակ, ՆԱՏՕ-ն հրաժարվում է Ուկրաինայի «նատո-ացման» քաղաքականությունից, Ուկրաինան դառնում է չեզոք երկիր, կրճատում է իր զինված ուժերը, ԱՄՆ-ն երաշխավորում է, որ Ուկրաինան չի ստանա հեռահար զենք եւ չի դառնա միջուկային տերություն: Նախատեսվում է պայմանագիրն ստորագրելու օրվանից դադարեցնել պատերազմը, իսկ 100-օրյա ժամկետում անցկացնել ուկրաինական ընտրություններ: Որից հետո գործողության մեջ կդրվեն Ուկրաինայի վերականգնման եւ զարգացման ծրագիրը: Որպես դոնորներ, հանդես կգա Ռուսաստանը՝ իր սառեցված հաշիվներից «տրամադրելով» մոտ 100 միլիարդ դոլար, ինպես նաեւ՝ ԵՄ-ն՝ ճիշտ այդքան գումարով: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա Թրամփը պատրաստվում է այս «գործարքի» հետագա եկամուտներից շահ ստանալ՝ մոտ 50 տոկոս, որպես «պլանի հեղինակ»: Ռուսաստանին աստիճանաբար կազատեն պատժամիջոցներից, բայց եթե հանկարծ խախտի պայմանավորվածությունները, դրանք կվերականգնվեն նոր ուժով: Առաջին հայացքից սա Ուկրաինայի պարտությունն է, կատարյալ կապիտուլյացիա: Կհամաձայնի՞ դրան Զելենսկու իշխանությունը: Կհաշտվի՞ Ուկրաինայի ժողովուրդը տարածքային կորուստների հետ, կնախընտրի՞ խաղաղությունն ու երկրի մնացորդացի զարգացումը, թե՞ կշարունակի պատերազմել: Թրամփի պլանի թիրախը սա է, իսկ հաջողությունը կախված է ուկրաինացիների որոշումից: Թրամփը Զելենսկուն թողել է խաղից դուրս՝ նախապես հոգալով, որ նա իր մտերիմների հետ հայտնվի կոռուպցիոն խայտառակ սկանդալի մեջ: Եվ Զելենսկին ընտրության մեծ հնարավորություն չունի՝ կամ պետք է հանձնվի ԱՄՆ իշխանություններին, կամ շարունակի անիմաստ խաղը Պուտին-Էրդողան զույգի հետ՝ վերջնականապես թշվառության մատնելով Ուկրաինան ու ուկրաինացիներին:

ՀԳ. *Այսքան բան տեսնելուց հետո, ես՝ ՀՀ շարքային քաղաքացիս, կնախընտրեմ լռել այն ամենի մասին, թե ինչ կատարվեց Հայաստանի հետ: Նիկոլ Փաշինյանին էլ խորհուրդ կտամ միառժամանակ լռել եւ անիմաստ չճամարտակել մեր բուն օրակարգից դուրս հարցերի շուրջ, ինչպիսին կաթողիկոս հեռացնելն է կամ ընդդիմություն արգելելը: Հայ-ադրբեջանական խաղաղության պայմանագրի վերջնական տեքստը, իմ անկախ, ՆԱՏՕ գնացող «հրաշալի տղա», դեռ կդնեն քո առաջ ու կասեն, թե քանի օրից պետք է ընտրություններ լինեն:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1934-ի ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԵՑ, ՈՐ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՏԱՐԱԾԵՆ ՄԻԱՅՆ ՆԱՑԻՍՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

ՊՊ-ի վարչախումբը սաստկացնում է խոսքի ազատության, իշխանության հսկողությունից դուրս գործող լրատվամիջոցների եւ անհնազանդ խմբագիրների ու լրագրողների հետապնդումները: Կառավարման բոլոր ոլորտներում ձախողված ՔՊ-ն, վստահ ենք, գոնե այս գործը կփորձի գլուխ բերել բարձր արդյունավետությամբ եւ պրոֆեսիոնալիզմով: Ինչպես գիտենք՝ Լուսնի տակ ոչինչ նոր չէ, հետեւաբար, սպասվող հալածանքները լինելու են արդեն եղածի նոր կատարումն ընդամենը: Իսկ եղածներից խիստ ուսանելի է հիտլերականների փորձը: Չնայած 1933-45 թթ. նացիստական Գերմանիան եւ 2018-25 թթ. ՔՊ-ական Հայաստանը պատկանում են տարբեր դարաշրջանների ու մշակույթների, սակայն լրատվամիջոցների ճնշման գործիքները զարհուրելիորեն նույնական են՝ վարկաբեկում, հալածանք, տուգանք, գործունեության խափանում, խմբագիրների ու լրագրողների հետապնդում: Մնացածն առջեւում է:

1933-ին Գերմանիայում իշխանության գլուխ անցած Ադոլֆ Հիտլերը երկրի բոլոր լրատվամիջոցները ենթարկեցրեց Յոզեֆ Գեբելսի ղեկավարած Ժողովրդական լուսավորության եւ պրոպագանդայի կայսերական նախարարությանը, որի հովանու ներքո էին նաեւ մշակույթը, բնակչության գաղափարախոսական կոփումը եւ արտաքին քարոզչությունը: 1934-ի հունվարի 1-ին գործողության մեջ դրվեց մի օրենք, ըստ որի՝ թերթերը, ամսագրերը, գրական հանդեսները, հրատարակչությունները ճանաչվեցին որպես պետական լուսավորման եւ դաստիարակության միջոցներ եւ պարտավոր էին տարածել Գերմանական ազգային-սոցիալիստական աշխատանքային կուսակցության գաղափարները: Սկսվեց համահարթեցման՝ հասարակական եւ քաղաքական կառույցները նացիստական կուսակցությանը ենթարկեցնելու գործընթացը: Լրագրող աշխատել ցանկացող անձը պետք է գրանցվեր Մամուլի կայսերական պալատում, անցներ մեկամյա մասնագիտական ուսուցում, ցույց տար քաղաքական բարեհուսություն եւ հանդես գար իբրեւ ճշմարիտ գերմանացի եւ նացիստական արժեքների կրող: Միայն 1934 թվականին աշխատանքը կորցրեց 1300 լրագրող՝ նոր կարգը մերժելու պատճառով, մոտ 1200 լրագրողի առաջադրվեցին քրեական մեղադրանքներ: Օրենքն իրավունք էր տալիս՝ լրագրողներին ենթարկել խոշոր դրամական տուգանքի, կալանքի կամ փակել այն լրատվամիջոցները, որոնք հրապարակում էին ռեժիմին խորթ նյութեր: Լրագրողների մեծ մասը ստիպված էր աշխատել ինքնահսկողության պայմաններում, մանրազնին ուսումնասիրելով գրածի ենթատեքստը: Ի վերջո, Գերմանիայում չմնաց ոչ մի լեգալ անկախ լրատվամիջոց՝ դրանք փակվեցին կամ ծառայության անցան նացիզմին: Հիտլերի կառավարման 12 տարիների ընթացքում բազում լրագրողներ նահատակվեցին իրենց մասնագիտական պարտքը կատարելու համար: Ըստ «Մամուլի ազատության տուն» կայքի տվյալների (տես https://www.haus-der-pressefreiheit.de/), ֆաշիստական ռեժիմը քննադատող լրագրող Վալտեր Շվերդֆեգերը երկարաժամկետ ազատազրկման է դատապարտվել պետական դավաճանության մեղադրանքով: Լրագրող Ռուդոլֆ Պեչելը նույնպես կալանավորվել է եւ 1942-ին ուղարկվել Սաքսենհաուզեն համակենտրոնացման ճամբար:

Համբուրգցի լրագրող, բանաստեղծ եւ հրատարակիչ Կարլ ֆոն Օսիեցկին (1889-1938թթ.) նետվել է Նոյենգամե համակենտրոնացման ճամբար՝ խաղաղության քարոզի եւ հակաֆաշիստական գործունեության համար: Նոբելյան հանձնաժողովը Օսիեցկուն շնորհել է իր մրցանակը՝ ճանաչելով նրա անձնական քաջությունն ու ճգնաժամային իրավիճակում մարդու իրավունքների պաշտպանության աշխատանքը հենց այն երկրում, որտեղ նա ենթարկվում է բռնաճնշումների: Դանցիգի լրագրող, լուսանկարիչ Ջոն Գրաուդենցը (1884-1942թթ.) մահապատժի է դատապարտվել Դիմադրության շարժմանը մասնակցելու համար: Այս դեպքերից բացի, ընդհանուր մթնոլորտն ու իրավական կարգավորումները վկայում են, որ լրատվամիջոցները եղել են նացիզմի զանգվածային բռնաճնշումների թիրախ. նպատակն անողոք ճնշմամբ ոչ միայն մեդիան իշխող ռեժիմի մաս դարձնելն էր, այլեւ հասարակության բոլոր շերտերի նկատմամբ տոտալ վերահսկողություն հաստատելը: Օսիեցկու, Գրաուդենցի եւ նրանց բախտակից գործընկերների ճակատագիրն ապացուցում է, որ ազատ մամուլի ոչնչացումը տոտալիտարիզմի հաստատման պարտադիր նախապայմաններից է: Այժմ էլ, երբ ձախողված եւ հանրային վստահությունը կորցրած վարչախմբերը փորձում են կառչած մնալ իրենց կործանվող իշխանության ղեկին, հարձակումներ թիրախում կրկին լրագրողներն ու խմբագիրներն են:

Թեեւ Հայաստանը դեռ չի դասվում մամուլը բռնաճնշող երկրների շարքին, այդուհանդերձ, տեսանելի են մի շարք վտանգավոր միտումներ՝ վիրավորանքներ լրագրողների հասցեին եւ մասնագիտական գործունեության խոչընդոտումներ, դատական գործերի քանակի աճ, պետական մարմինների կողմից մեդիայի նկատմամբ ատելության աճ, քաղաքական ծայրահեղ բեւեռացում, որը սպառնալիք է մարդկանց, այդ թվում եւ՝ լրագրողների անվտանգության համար:

Արա ՍԱՀԱԿՅԱՆ

ՈՈ աշխատակիցը սովահար է արել շանը, ասեղով երշիկ տվել

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի Վանաձորի նստավայրում արտառոց դատաքննություն է ընթանում: Ամբաստանյալի աթոռին Էրիկ Ալեքսանյանն է, որը ռազմական ոստիկանության աշխատակից է: Նրան մեղադրում են սեփական շանը տանջամահ անելու մեջ: Ըստ մեղադրական եզրակացության, Էրիկ Ալեքսանյանը, «հանդիսանալով ՊՆ զորամասի պայմանագրային զինծառայող, կոչումով՝ շարքային, շուրջ 2 տարի իրեն պատկանած պիտբուլ տեսակի շան նկատմամբ դաժան վերաբերմունք է դրսեւորել»: Ըստ դատախազության, նա օրեր շարունակ շանը կապել է նախ ինչ-որ սյունից, հետո՝ երկաթբետոնից արտացցված ամրանից ու հենասյունից, սովամահ է արել, չի կերակրել, ապա երշիկի մեջ ասեղ տեղադրելով, կերակրել է սովահար շանը՝ հանգեցնելով կենդանու կյանքի ընդհատմանը: Երեկ Վանաձորի կենդանասերները հավաքվել էին դատարանի շենքի մոտ՝ պահանջելով Էրիկ Ալեքսանյանի հանդեպ խիստ պատիժ: Մնում է զարմանալ, թե ինչպես կարող է նման անձը ծառայել իրավապահ մարմնում, նաեւ՝ հայոց բանակում:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՅՑԵԼԱԾ ՁԵՌՆՈՑԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ՄԱՐՏԻՑ ՉԻ ԱՇԽԱՏՈՒՄ

Այս տարվա մարտից Բերդ քաղաքի ձեռնոցի գործարանը հարկադիր պարապուրդի մեջ է, քաղաքի եւ նույն համայնքի ավելի քան 200 աշխատող զրկվել է հանապազօրյա եկամտից: 2018թ. օգոստոսի 10-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Բերդում «Տավուշ Տեքստիլ» ընկերության ձեռնոցի գործարան էր այցելել, ձեռնարկության գործունեության մասին երկար զրուցել Մոսկվայում բնակվող սեփականատեր Սուրեն Երիցյանի հետ:

Ծնունդով Արծվաբերդ գյուղից, Ռուսաստանում գործարարությամբ զբաղվող Սուրեն Երիցյանը, բացի Բերդ քաղաքից, ձեռնոցի գործարաններ է ստեղծել, գործարկել Բերդ համայնքի սահմանամերձ Արծվաբերդ, Չորաթան, Պառավաքար գյուղերում: Լրատվամիջոցները նշում էին, որ այդ գործարանների աշխատանքով Բերդի սահմանագոտում 1500 աշխատատեղ է ստեղծվել:

Այս տարվա մայիսին անձամբ զանգահարել եմ Բերդի ձեռնոցի գործարանի տնօրեն Միքայել Եզեկյանին, հարցրել, թե ինչ պատճառով են գործարանի աշխատանքը դադարեցրել: Ասաց, որ դադարեցումը ժամանակավոր է, հարցրի՝ իսկ ինչո՞ւ եք գործարանից հաստոցները տեղափոխել: Ասաց՝ ինչո՞ւ եմ հետաքրքրվում դրանով, ինչո՞ւ չեմ գրում նոր բերված հաստոցների մասին: Այս տարի Բերդ քաղաքի ձեռնոցի գործարանի տնօրինությունը գրավոր դիմել է Բերդի համայնքապետարան՝ հայտնելով, որ գործարանը ժամանակավորապես դադարեցնում է աշխատանքը, չնշելով, թե երբ այն կվերսկսի: Այդ գրությունն ուղարկվել է, որպեսզի գործարանի աշխատած ժամանակահատվածի համար տեղական հարկեր, տուրքեր չհաշվարկվեն: «Տավուշ Տեքստիլի» ձեռնոցի գործարաններում աշխատանքի ճիշտ կազմակերպման, անվտանգության կանոնների պահպանման խնդիրներ կան:

2015թ. հոկտեմբերից «Տավուշ Տեքստիլ» ՍՊԸ-ում որպես օպերատոր-մեքենավար աշխատող, Արծվաբերդ գյուղի բնակչուհի, 1990թ. ծնված Լիաննա Զարգարյանը, չանցնելով հրդեհատեխնիկական հրահանգավորում, 2016թ. հուլիսի 8-ին ինքնակամ, շանը փրկելու նպատակով մտել է Արծվաբերդի գործարանի տարածքում առկա՝ թափոնների այրման եղանակով ոչնչացման համար նախատեսված փոսը, ստացել ջերմային եւ առողջության ծանր վնասի հատկանիշներ պարունակող մարմնական վնասվածքներ: Մեկ այլ դեպք էլ եղել է 2019 թ. սեպտեմբերի 6-ին. Արծվաբերդի ձեռնոցի գործարանում աշխատող 19-ամյա երիտասարդն ընկել է վերելակի նկուղային հարկը, նրան տեղափոխել են Բերդի բժշկական կենտրոն: Իսկ 2024 թվականին Արծվաբերդի ձեռնոցի գործարանում հրդեհ է եղել: Արծվաբերդի բնակիչներն ասում են, որ հրդեհի հավանական պատճառը եղել է կայծակի հարվածը: Գյուղի բնակիչների խոսքերով՝ հրդեհի հետեւանքով այնտեղ գտնվող արտադրական հաստոցները չեն վնասվել, կրակից այրվել, ծխահարվել, վնասվել է գործարանի տանիքի մի մասը: Սակայն հենց այդ ժամանակից Արծվաբերդի ձեռնոցի գործարանը չի աշխատում, գործարանի տարածքը ծառայում է որպես պահեստ:

Նոյեմբերի 19-ին կրկին զանգահարեցի Բերդի ձեռնոցի գործարանի տնօրեն Միքայել Եզեկյանին: Ասաց, որ Բերդի ձեռնոցի գործարանը կսկսի աշխատել, խնդիրների լուծումն ընթացքի մեջ է, սակայն այդպես էլ գործարանի վերագործարկման որոշակի ժամկետ չնշեց եւ ոչինչ չասաց գործարանի չաշխատելու պատճառների մասին: Բերդի ձեռնոցի գործարանի չաշխատելու պատճառների մասին տարբեր վարկածներ կան: Կարծիքներ կան, որ այն չի գործում Ուկրաինայում ընթացող պատերազմով պայմանավորված Ռուսաստանի ֆինանսական խնդիրների, ռուսական ռուբլու փոխարժեքի անկման պատճառով:

Շատ բարվոք չէ վիճակը նաեւ «Տավուշ Տեքստիլ» ՍՊԸ-ի ձեռնոցի գործարանում, որտեղ բանվորներն աշխատում են օրական 12 ժամ՝ 20-30 որպե ընդմիջումով, գիշերային հերթափոխի աշխատողները հավելյալ չեն վարձատրվում, աշխատավարձը բարձր չէ: Բայց սահմանագոտու բնակիչները հարկադրված համաձայնում են այդ պայմաններին, որովհետեւ չհամաձայնելու այլընտրանքը գործազրկությունն է:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Մետրոպոլիտեն թանգարանում ցուցադրությունը խոստանում է հետաքրքիր լինել

Մետրոպոլիտեն թանգարանը 2026-ի գարնանը կներկայացնի Զգեստների ինստիտուտի՝ հագուկապի պատմական զարգացմանը նվիրված Costume Art ցուցադրություն: Ինչով է այն հետաքրքիր լինելու: Կազմակերպիչները նշում են, որ այն յուրատեսակ հետազոտություն ու պատմական էքսկուրս է լինելու՝ մարդու հագուկապի մասին, որը երկխոսություն է հանդիսատեսի հետ՝ արվեստի ու նորաձեւության միջոցով: Նաեւ կատարվելու է նոր՝ Conde M. Nast ցուցասրահում, որն ունենալու է 1115 մետր քառակուսի մակերես:

Կոստյումի ինստիտուտի գլխավոր կուրատոր Էնդրյու Բոլթոնը հայտարարել է, որ նախագծի գաղափարը նորաձեւությունն է, որը կապում է հագուկապին նվիրված բոլոր ցուցասրահներում ներկայացված հագուստեղենը: Այն նաեւ միախառնելու է արվեստն ու նորաձեւությունը՝ դրանք դարձնելով հավասարապես կարեւոր: Հատկապես ուշադրություն է դարձվելու մարմնի ձեւերի ու հագուստի միջեւ եղած կապին: Մոտ 400 ցուցանմուշները բաժանված են լինելու երեք խոշոր կատեգորիաների՝ դասական կերպարներ եւ նյու, ավանդական կերպով անտեսվող եւ հնացող ու հղի կանայք, ինչպես նաեւ՝ ունիվերսալ անատոմիական մոդելներ: Մտածված է յուրաքանչյուր մանրուք՝ սկսած ցուցասրահների առաստաղի բարձրությունից, վերջացրած յուրաքանչյուր ցուցանմուշի համար նախատեսված մանեկենի եւ դրա պատվանդանի բարձրությամբ: Կան նաեւ նորարարական լուծումներ: Օրինակ՝ մանեկեններն ունենալու են հայելային գլուխներ, որոնք կրճատելու են դիտողի ու ցուցանմուշի տարածությունը, լինելու են իրական մարդկային մարմնի չափերի ու ունենալու են իրական մարդկային մարմնի բոլոր յուրահատկությունները, որոնք հնարավոր է արտացոլել մանեկենի վրա: Ցուցահանդեսի ժամանակ ներկայացվելու են նաեւ միջնադարյան արվեստի հայտնի գործեր, ինչպես, օրինակ, Ալբրեխտ Դյուրերի «Ադամն ու Եվան» գրավյուրը՝ 16-րդ դար, Նիկա դիցուհու անտիկ արձանիկը՝ մ.թ.ա. 5-րդ դար: Հայտնի հագուստեղենի ցուցանմուշներից լինելու Մարիանո Ֆորտունիի՝ 1920-ական թվականների «Դելփոս» շրջազգեստը, ինչպես նաեւ՝ 1947 թվականին Չարլզ Ջեյմսի հեղինակած զգեստները, Ռեյ Կավակուբոյի ու Ռիկարդո Տիշիի հեղինակած մոդելները: Ցուցադրությունը բացվելու է 26 թ. մայիսի 10-ին եւ գործելու է մինչեւ 27 թ. հունվարի 10-ը: Մայիսի 4-ին էլ լինելու է ավանդական Met Gala բարեգործական պարահանդեսը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿԻՉԸ ԴԻԼԻՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՄԻՄԱՊԵԼԻ ԳՆՈՎ ՀՈՂԱՄԱՍ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

ՏԻԳՐԱՆ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքից տեղեկացա, որ Նաիրա Վլադիկի Մարտիրոսյանը դիմել է Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին՝ Դիլիջանի Մյասնիկյան փողոց, թիվ 37/4 հասցեի՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող 1200 քմ հողամասին կից (Շարամբեյան փողոց, թիվ 9/1 հասցեի) 230 քմ մակերեսով հողամասն ընդլայնման կարգով իրեն օտարել: Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության եւ հողաշինության հարցերի հանձնաժողովը նշել է, որ այդ 230 քմ հողամասը չի համարվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման իններորդ գոտում, եւ Դիլիջանի համայնքապետ Դավիթ Սարգսյանն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն՝ նշված հողամասն ուղղակի վաճառքի ձեւով, ընդլայնման կարգով, 2 միլիոն 418 հազար 174 ՀՀ դրամ արժեքով օտարել Նաիրա Մարտիրոսյանին: Նոյեմբերի 7-ին համայնքի ավագանին համաձայնություն է տվել այդ առաջարկությանը: Ավագանու նիստում այդ հարցի քվեարկությանը մասնակցել է ավագանու 11 անդամ, որից 10-ը կողմ է եղել համայնքի ղեկավարի առաջարկությանը, իսկ «Ապրելու երկիր» խմբակցության անդամ Արմենուհի Մաիլյանը ձեռնպահ է քվեարկել:

ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Հովհաննես Շարամբեյանը մեծ աշխատանք է կատարել ժողովրդական արվեստի պահպանման եւ զարգացման ուղղությամբ: Շարամբեյանն ավելի քան երեսուն տարի աշխատել է Դիլիջանի հին փողոցի վերականգնման վրա՝ մասնակցելով նախագծմանը, լուծելով կազմակերպչական հարցեր, ստեղծելով շենքերի մանրամասն էսքիզներ: Հենց Հին Դիլիջանում է գտնվում Շարամբեյան փողոցը: Մյասնիկյան փողոցը, որտեղ սեփականության իրավունքով 1200 քմ հողամաս ունի Նաիրա Մարտիրոսյանը, քաղաքի կենտրոնական փողոցն է: Իսկ ո՞վ է Նաիրա Մարտիրոսյանը: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքի ընտրողների ռեգիստրում որոնում տալով՝ տեղեկանում եմ, որ 1961թ. ծնված Նաիրա Վլադիկի Մարտիրոսյանը Երեւանի Կենտրոն վարչական շրջանի Եզնիկ Կողբացի փողոցի բնակիչ է: Երեւանի կենտրոնի բնակիչը, Դիլիջանի կենտրոնում իր ունեցած 1200 քմ հողամասից զատ, ընդամենը 2 միլիոն 418 հազար դրամով տուրիստական քաղաքի ամենակենտրոնում ձեռք է բերել 230 քմ հողամաս, որի շուկայական գինն առնվազն մի քանի անգամ գերազանցում է 2 միլիոն դրամը: Դիլիջանի համայնքապետն ու ավագանին այդ հողամասն աճուրդով չեն վաճառել, այլ ուղղակի վաճառքով, ընդլայնման կարգով, կադաստրային գնով օտարել են Երեւանի բնակչին, ինչի հետեւանքով համայնքի բյուջե չեն մտել միլիոնավոր դրամներ:

Ինչպես Նիկոլ Փաշինյանն էր ընդդիմադիր ժամանակ հայտարարում՝ կոռուպցիան հո պոզով-պոչով կենդանի չէ՞, կոռուպցիան հենց սա է: Համայնքի ղեկավար Դ. Սարգսյանը կոռուպցիայից հեռու չէ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը նրան ընդամենը մեկ տարի առաջ՝ 2024թ. նոյեմբերին, տուգանել է 300 հազար դրամով՝ շահերի հնարավոր բախման մասին հանձնաժողովին գրավոր չտեղեկացնելու համար: 2024 թ. մայիսին նույն՝ Դիլիջանի համայնքապետարանը դեպի Իջեւան տանող ճանապարհին գտնվող հողակտորն օտարելու համար աճուրդ է հայտարարել, որին միայն ՔՊ-ական համայնքապետի եղբայրը՝ Սասուն Սարգսյանն է մասնակցել եւ հաղթել է մեկնարկային ամենացածր գնով: «Արու» համայնքապետը, փաստորեն, արուին վայել ախորժակ էլ ունի:

Նյութերը՝ Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆՈՒՄ 8 ՀԱԶԱՐ 900 ԵՐԵԽԱ ՍՊԱՍՈՒՄ Է ԻՐ ՀԵՐԹԻՆ

Հոկտեմբերի 1-ին տեղեկատվական հարցում եմ ուղարկել Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանին՝ Երեւանում բնակվող, նախադպրոցական կրթության կարիք ունեցող քանի՞ երեխա կա, որոնք նախադպրոցական հաստատություն չեն հաճախում՝ այդ հաստատություններում ազատ տեղեր չլինելու պատճառով: Երեւան քաղաքում ներկայում քանի՞ մանկապարտեզի շենք է նորոգվում, դրանցից քանիսի՞ նորոգման ժամկետներն են խախտվել: Քաղաքապետարանն իմ հարցմանը պատասխանելու համար օրենքով նախատեսված առավելագույն՝ 30-օրյա ժամկետ էր խնդրել, որից հետո պատասխանել է. «Հանրակրթության վարչությունից տեղեկացնում են, որ Երեւանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում հերթագրված է տարբեր տարիքային խմբերի շուրջ 8 հազար 900 երեխա, որոնց նախադպրոցական կրթությունը հնարավոր է կազմակերպել 2026-2027 ուսումնական տարում, քանի որ ներկայում հաճախող շուրջ 9 հազար երեխա 2026-2027 ուսումնական տարում հաճախելու է դպրոց: Շինարարության եւ բարեկարգման վարչությունից տեղեկացնում են, որ Երեւան քաղաքում ներկայում հիմանորոգվում է 4 մանկապարտեզ՝ թիվ 41, թիվ 95, թիվ 105, թիվ 140: Թիվ 41 եւ թիվ 105 մանկապարտեզների շինարարական աշխատանքները նախատեսվում են ավարտել սույն թվականի վերջին, իսկ հհ. 95, 140-ը՝ 2026 թվականի առաջին եռամսյակում:

Աջափնյակ վարչական շրջանի Գուրգեն Մարգարյանի անվան թիվ 41 մանկապարտեզի հիմնանորոգման եւ բակի բարեկարգման աշխատանքներն իրականացվում են Երեւանի քաղաքապետարանի եւ «Էլդոգար» ՍՊ ընկերության միջեւ 27.03.2023թ. կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/36 ծածկագրի գնման պայմանագրի շրջանակում: Պայմանագրով նախատեսված ժամկետ է սահմանվել 17.07.2025թ.: Նոր Նորք վարչական շրջանի թիվ 105 մանկապարտեզի հիմանորոգման աշխատանքներն իրականացվել են Երեւանի քաղաքապետարանի եւ «Լիլանարմ» ՍՊ ընկերության միջեւ 19.04.2023թ. կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ- 23/43 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակում: Պայմանագրով նախատեսված ժամկետ է սահմանվել 21.01.2025թ.: Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 95 մանկապարտեզի հիմանորոգման աշխատանքներն իրականացվում են Երեւանի քաղաքապետարանի եւ «Էնջինիրինգ» ՓԲ ընկերության միջեւ 01.07.2022թ. կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ- 22/75 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակում: Պայմանագրով նախատեսված ժամկետ է սահմանվել 01.07.2023թ.: Շենգավիթ վարչական շրջանի հ. 140 մանկապարտեզի հիմանորոգման եւ բակի բարեկարգման աշխատանքներն իրականացվում են Երեւանի քաղաքապետարանի եւ «Ժիլյո» Ա/Կ-ի միջեւ 06.02.2023թ. կնքված ԵՔ_ԲՄԱՇՁԲ-23/13 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակում: Պայմանագրով նախատեսված ժամկետ է սահմանվել 23.10.2024թ.: Միաժամանակ տեղեկացնում եմ որ պայմանագրերին առնչվող համապարփակ տեղեկատվություն հնարավոր է ստանալ՝ անցնելով հետեւյալ հղումով՝ https://armeps.am/ppcm/public/contracts»:

Ի՞նչ է ստացվում. մայրաքաղաքի մանկապարտեզներում տեղ չլինելու պատճառով նախադպրոցական տարիքի 8 հազար 900 երեխա այժմ մանկապարտեզ չի հաճախում, իսկ քաղաքապետարանից ասում են, որ այժմ մանկապարտեզ հաճախող 9 հազար երեխա հաջորդ տարի դպրոց կհաճախի, ու մանկապարտեզներում տեղեր կբացվեն: Բայց չէ՞ որ հաջորդ տարի Երեւանի հազարավոր մանուկներ մեծանալով՝ կդառնան մանկապարտեզ հաճախելու տարիքի, եւ նրանց՝ մանկապարտեզում տեղավորելու հարցը կմնա բաց: Քաղաքապետարանը պետք է միջոցներ ձեռնարկի շինարարական կազմակերպությունների կողմից մանկապարտեզների շենքերի նորոգման ժամկետները տարիներով ուշացնելու եւ պայմանագրային պարտավորությունները խախտելու դեմ: Ինչպես նաեւ նոր շենքեր հատկացնի եւ նոր մանկապարտեզներ բացի՝ առկա պահանջարկը բավարարելու համար:

ԵՎ, ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ, ԴԱՎԱՃԱՆՈ՞ՒՄ Է, ԱՐԴՅՈՔ, ՓԱՇԻՆՅԱՆԸ ԿՆՈՋԸ

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Երեկ է, առաջին օրը դատական նիստի էի մասնակցում, որի ժամանակ մի բավականին տարօրինակ հարց էր քննարկվում՝ դավաճանո՞ւմ է, արդյոք, Փաշինյանը կնոջը: Ասեմ, որ շատ հետաքրքիր դատ էր: Դե, հո ամեն օր այսպիսի «տժժիկ» թեմաներով դատ չի՞ լինում մեզ մոտ… Լիքը լրագրող կար, եւ մի բեղավոր տղամարդ՝ որպես մեր հետաքրքրասեր հասարակայնության ներկայացուցիչ (պայմանական անունը՝ Պողոս):

Եվ, ուրեմն, քննարկվում էր «Հրապարակի» հնչեցրած հարցը՝ դավաճանո՞ւմ է, արդյոք, Փաշինյանը կնոջը: Առաջին իսկ վայրկյաններից պարզվեց, որ կողմերը՝ Փաշինյանը եւ «Հրապարակը», շատ լուրջ են տրամադրված: «Հրապարակը»՝ որպեսզի գլուխն ազատի այս հիմար պատմությունից, եւ Փաշինյանը՝ որպեսզի ապացուցի, որ իրեն շառով են տվել, եւ ինքը չի դավաճանում կնոջը: «Հրապարակի» փաստաբանը խոսեց, հայցվորի ներկայացուցիչը… Պողոսի քունը տարավ նրանց խուճուճ ելույթներից: Այնպիսի բառեր էին օգտագործում, այնպիսի մտքեր շարադրում՝ երկարաշունչ նախադասություններով, որոնց ո՛չ ծայրն էր կարողանում բռնել Պողոսը, ո՛չ վերջը: Պողոսին մի հարց էր հետաքրքրում ընդամենը՝ դավաճանո՞ւմ է, արդյոք, Փաշինյանը կնոջը: Պարզ ասեք, էլի՝ հա՞, թե՞ չէ… Էլ ի՞նչ եք ընկել՝ գիտահետազոտական- միտահետազոտական…

Ու մինչ դատավորն ու կողմերը հարցի «գիտա-առարկայական» հիմքերն էին քննում, Պողոսն ընկել էր սեփական հիշողությունների գիրկը: Մի անգամ էլ իրենց գյուղում էր այսպիսի սկանդալ պայթել: Մի օր փոշտալոն Վասիլը սովորականից ուշ էր տուն եկել: Ասում էին՝ երկար ժամանակ անմարդ Շողերի տանն էր լռվել… Տո լի՝ կարեւոր նամակ էր տարել, տո լի՝ մտել էր ջուր խմելու: Ուշացել էր: Հարեւանուհիները շտապել էին Վասիլի կնոջ՝ Արմաղանի ականջին շշնջալ՝ ախչի, կարող ա՞ Վասիլը քեզ դավաճանում ա… Արմաղանը ձեռքը թափ էր տվել՝ չէ, դա հնարավոր չի: Ախչի, խի՞ հնարավոր չի, բոլոր տղամարդիկ էլ մի սանրի կտավ են՝ աչքները դուրս: Ասի՝ չէ, էլի, դա հնարավոր չի, համարյա զայրացել էր Արմաղանն ու հայտարարել. «Խաչն իմն է, զորությունը ես գիտեմ»: Խոսակցությունները, թե դավաճանո՞ւմ է, արդյոք, փոշտալոն Վասիլը կնոջը, իսկույն լռեցին, ու հարցն այդպես փակվեց:

Ովքեր եղել են դատարաններում, հավանաբար նկատել են, որ դատավարության կողմերի համար նախատեսված տեղերը «հանդիսատեսից» առանձնացված են մոտ 1 մետր բարձրությամբ փայտյա միջնորմներով: Պողոսը նկատել էր, որ իրեն Նիկոլ Փաշինյանի ներկայացուցչից բաժանող միջնորմը վատ է ամրացված: Փորձեց… Շարժվում էր… Հետո էլ Նիկոլը մեծ-մեծ խոսում է չափորոշիչներից, բողոքում վատ ամրացված ծորակներից… Բա սա դատարանի շնո՞րհք է, մի փայտ էլ չեն կարողանում նորմալ ամրացնել: Ու մի հատ «ծպպացրեց»: Նիկոլի ներկայացուցիչը վեր թռավ՝ սա ի՞նչ վերաբերմունք է դատարանի նկատմամբ, Դուք խոսում եք, հարգելի դատավոր, իսկ իմ հետեւում «ծպպացնում» են: Պողոսը, որ իր բնույթով կոնֆլիկտային մարդ չէր, իսկույն ոտքի կանգնեց եւ խոստովանեց, որ այդ «ծպպոցը» հարգելի դատարանին չէր վերաբերում, այլ՝ մեծարգո վարչապետին, որ մի փայտ անգամ չի կարողանում լավ ամրացնել: Հարգելի դատարանը դա համարեց համոզիչ փաստարկ եւ Պողոսին, ի հեճուկս Նիկոլի ներկայացուցչի, դուրս չհրավիրեց դահլիճից:

Այդ միջադեպից հետո սկսվեց ամենահետաքրքիրը: Նիկոլի ներկայացուցիչն այնքան խորացավ հարցի «էության» մեջ, որ սկսեց պատասխանող կողմից հետաքրքրվել, թե ինչ է տեղի ունեցել այն բանից հետո, երբ Նիկոլ Փաշինյանը, ինչպես գրված է խնդրո առարկա հոդվածում, իր աշխատասենյակում ժամերով փակվել է խոսնակի հետ, ապա այնտեղից տարօրինակ ձայներ են լսվել: «Հրապարակից» պատասխանեցին՝ չգիտենք, մենք փակվելու մասին լսել ենք օդում կախված խոսակցություններից: Նիկոլի ներկայացուցիչը համառեց՝ չէ, դուք մեզ պիտի ասեք՝ ինչ-որ գործողություններ հետեւե՞լ են փակվելուն, թե՞ ոչ: Այ մարդ, մենք այդպիսի մանրամասներ չգիտենք, մենք մեզ հասած տեղեկությունների տերն ենք, մենք ձեր մտքով անցածի տերը չենք: Մենք խնդիր չունենք ապացուցելու, որ աշխատասենյակում տեղի է ունեցել հենց այն, ինչ դուք եք մտածում…

Այ քեզ խայտառակություն… Պողոսն իր կյանքում երբեք չէր երազել դատավոր դառնալու մասին, եւ սա առաջին դեպքն էր, որ նա զգաց, թե ինչ դժվար բան է դատավոր լինելը: Բա սա դատարանով քննելու հա՞մրց է, որ բերել են դատարան: Էն խեղճ կնոջն էլ նստեցրել են ամենատեսանելի տեղում, թե որոշիր՝ դավաճանո՞ւմ է, արդյոք, Փաշինյանը կնոջը: Այդ կինը ո՞նց որոշի, ախր, այնտեղ չի եղել, անձամբ չի տեսել, եւ, առհասարակ, երբ փակ սենյակում որեւէ գործողություն է տեղի ունենում, այն էլ՝ այսպիսի հնչեղության, կարող են տեղյակ լինել շատ սահմանափակ քանակով մարդիկ, տվյալ դեպքում՝ սենյակում փակվողները, մեկ էլ, շատ-շատ, ԱԱԾ-ն՝ իր գաղտնալսող ու գաղտնատեսագրող սարքերով: Սրանք կպել են թերթին, թե պիտի ասեք՝ տեսել ենք, որ դատավորն էլ վճիռ կայացնի՝ դավաճանո՞ւմ է, արդյոք, Փաշինյանը կնոջը:

Պողոսին թվաց, որ հարգելի դատարանի զահլան էլ գնաց այս խոսակցությունից: Տիկին դատավորը խոստացավ, որ կծանոթանա կողմերի ներկայացրած փաստարկներին, եւ հաջորդ դատական նիստի օր նշանակեց 2026թ. հունվարի 21-ը՝ Վլադիմիր Իլյիչ Լենինի մահվան օրը: Պողոսի համար դա անընդունելի էր: Ամենահետաքրքիր տեղում այսպես ընդհատել գործի քննությունը… Դե արի ու այդքան սպասիր…

ՀԳ. *Թեեւ Պողոսին խոսք չհասավ դատարանում, բայց նա ուներ իր ուրույն դատողություններն ու հարցի կարգավորման իր տեսլականը: Մտածում էր՝ դատավարության մասնակիցներին պատմել փոշտալոն Վասիլի գլխով անցածը… Մի՞թե վատ կլիներ, որ շահագրգիռ կողմերը միասին այցելեին այս գործով «ենթադրյալ» տուժող Աննա Հակոբյանին՝ Նիկոլի կնոջը: Կամ էլ Աննա Հակոբյանը ներկայանար դատարան: Ո՞վ ավելի լավ գիտի՝ դավաճանո՞ւմ է, արդյոք, ամուսինն իրեն, քան այդ ամուսնու սեփական կինը: Եվ, ուրեմն, ինչո՞ւ չհարցնել Աննա Հակոբյանին… Մարդ ես, ու ասաց՝ այդպիսի բան չկա, «խաչն իմն է՝ զորությունը ես գիտեմ»: Դրանից հետո էլ ի՜նչ ԱԱԾ, էլ ի՜նչ դատարան, էլ ի՜նչ գիտահետազոտական…*

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 22.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՎՐԱՑԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ ԿՄԱՍՆԱԿՑԻ՞Ր ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վրաստանի խորհրդարանի խոսնակ Շալվա Պապուաշվիլին հայտարարել է, որ իշխանությունը մտադիր է արգելել վրացիներին մասնակցել՝ Վրաստանի տարածքից դուրս ընտրություններին: Վրաստանի նոր Ընտրական օրենսգիրքը ներկայում գտնվում է խորհրդարանում եւ անցնում է մշակման փուլ: Ըստ այդմ, Վրաստանի քաղաքացիներն ընտրություններին կկարողանան մասնակցել միայն երկրի տարածքում: Այսինքն, արտասահմանում ապրող Վրաստանի քաղաքացիներն ընտրություններին մասնակցելու համար պետք է վերադառնան հայրենիք, ներկայանան ընտրատեղամաս, որ քվեարկեն: Հիմնավորումն այն է, որ դրսում բնակվող Վրաստանի քաղաքացիները գտնվում են օտար քաղաքական միջավայրի ազդեցության ներքո, եւ վրացական պետությունը չի կարող այլ կերպ այդ միջամտությունները կանխել:

Փոփոխությունները, որոնք նախատեսվում են կատարվել Վրաստանի ընտրական օրենսգրքում, եզակի չեն: Համաշխարհային պրակտիկայում նման նախադեպեր կան, օրինակ՝ Հայաստանի, Մալթայի, Իսրայելի, Իռլանդիայի պարագայում: Վրաց քաղաքագետ Արչիլ Սիխարուլիձեն այս փոփոխությունը դիտարկում է որպես վրացական իշխանությունների կողմից՝ վրացական սփյուռքին ընտրական գործընթացներից հեռու պահելու ցանկություն: «Վրաստանի իշխանություններն այս դեպքում հիմնվում են Մոլդովայի փորձի վրա, որտեղ քաղաքացիների մեծ մասը, ովքեր ապրում էին Մոլդովայում, քվեարկել էին ընդդիմության օգտին, սակայն իշխանությունը կարողացավ պահպանվել շնորհիվ Եվրոպայում բնակվող մոլդովացիների քվեարկության: Դա բավականին տհաճ նախադեպ էր, հատկապես՝ եթե հաշվի առնենք, որ Մոլդովայի այն քաղաքացիները, ովքեր ապրում էին ոչ թե Եվրոպայում, այլ՝ Ռուսաստանում, քվեարկելու իրավունքից զրկվել էին: Ստացվում է, որ ռուսաստանաբնակ մոլդովական սփյուռքը դարձավ աշխարհաքաղաքական պայքարի գործիք, իսկ եվրոպաբնակ սփյուռքն էլ օգտագործվեց ներպետական դեմոկրատական պրոցեսների վրա Արեւմուտքի ազդեցությունը պահելու համար»: Ըստ փորձագետի, լիովին հասկանալի է, որ «Վրացական երազանքը», որը խնդիրներ ունի Եվրոպայի հետ, ուզում է ապահովագրել իրեն: Վրաստանի իշխող մեծամասնությանը պետք չէ, որ Եվրոպայում կամ Միացյալ Նահանգներում ապրող վրացիները, որոնց աջակցում են Եվրոպան եւ ԱՄՆ-ն, քվեարկեն իրենց դեմ:

Բացի այդ, ըստ քաղաքագետի, վրացական իշխանությունները շարժվում են այն տրամաբանությամբ, որ ընտրական որոշումները պետք է կայացվեն անմիջականորեն նրանց կողմից, ովքեր ապրում են երկրի տարածքում: Պետական կարեւորություն ունեցող հարցերի վրա չպետք է ազդեն այն մարդիկ, ովքեր հեռացել են երկրից, եւ ունեն երկքաղաքացիություն: Նրանք չպետք է հնարավորություն ունենան՝ որեւէ կերպ վերահսկելու Վրաստանը: «Մարդիկ, ովքեր ապրում են Վրաստանում եւ մասնակցում են ընտրություններին, ավելի ադեկվատ կերպով են հասկանում այն ռիսկերը, որոնք առկա են երկրում, եւ մշտապես քվեարկելու են այն իշխանությունների օգտին, որը քարոզում է խաղաղություն եւ կայունություն: Իսկ այն մարդիկ, ովքեր ապրում են արտասահմանում, քվեարկում են միայն սեփական աշխարհաքաղաքական ճաշակին համեմատ, քանի որ ինչ էլ տեղի ունենա Վրաստանում, ֆիզիկական առումով իրենց վրա չի ազդելու»,- նշել է փորձագետը: Եթե նոր օրենսդրությունն ընդունվի, ապա Վրաստանի մոտ 3 միլիոն քաղաքացի, ովքեր չեն ապրում Վրաստանում, սակայն պահպանել են վրացական քաղաքացիությունը, կզրկվեն ընտրելու հնարավորությունից:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am